

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԵՒՐՈՊԱՆ

Հնամանի «Մորնինկ Բուսոլ» օրացիքը օգոստոս 5ին խմբագրական մը հրատարակեց Հայ զաղթականներուն Ռուսիայէն իրենց երկիրը վերադառնալու բանակցութեան յաջող ելքին առթիւ: Այդ յօդուածին հետեւեալ մասը առաջ կը բերեմ:

«Ռուս կառավարութիւնը որ թիրաքականին չափ ազնի գիտէ բաղձաթիւ հայ հպատակներ ունենալու անպատեհութիւնը, կ'աճապարէր որ ուստական Հայաստան զաղթող թրքահպատակ Հայերը ժամ առաջ իրենց նախկին բնակավայրը վերադառնան: Կասկած ծագեցաւ թէ Ռուսիոյ այս փութաջանութեան նպատակը այդ նորիկ Հայերէն ազատուիչ չէր միայն, այլ նաեւ իր հպատակ Հայերէն ալ այնքան բանակութեամբ զուրս հանել որքանը հնարաւոր էր թիրաքեւր ընել: Այդ ցեղը երկու պետութիւններէն եւ ոչ մէկուն կառավարութեանը հաճելի է: Թէ՛ Ռուսերը, թէ՛ Թիրաքերը չեն սիրեր Հայերը, ինչպէս որ Հրեաները միջին դարուն առեւելի կ'են Ասիայի, վասն զի ցեղը վաշխատուններու ցեղ մըն է: Արեւմուտքի յառաջացեալ զաղափարները Արեւելեան նախնական երկիրները ներմուծելու արտակարգ կարողութիւն ունի, եւ մեծ ընդունակութիւն՝ տեղական ազգեցութիւն ձեռք բերելու եւ իր զիտութիւնը տարածելով երկրին կարգ-կանոնները խանդարելու: Ասիկ զատ՝ Հայոց ստորին դասակարգը անպարկեշտ է, եւ շատ պարագայի մէջ անզուսպ, մինչ ցեղը իր ամբողջութեամբ բան մը չաւելցնէր երկրին զինուորական ուժին վրայ: Թիրաք կառավարութիւնը միշտ աշխատեւ է Ֆիւրափոտանի Հայոց թիւը եւ զօրութիւնը պակսեցնելու, եւ ինչպէս զիտենք, ջանադիր եղած է այդ նպատակին հասնիլ Գրոմուսկի մէթոսներուն քիչ շատ նմանող միջոցներով:»

Անպիտակ մէջ Հայկական խնդրին բազաքական կարեւորութեան ակարանալէն յետոյ մեզի աննպաստ այդ օրինակ յօդուածներուն հրատարակութիւնը պէտք չէ վերապի մեր ուշադրութենէն: Ազնուապետական շրջանակներու մէջ տարածուած «Մորնինկ Բուսոլ»ի խմբագրականին մէկ կէտը միայն նկատուածեան անենք այսօր:

Հայաստանի բարեկարգութեան խնդրին ծագումէն մինչեւ բանի մը տարի առաջ մեզի նկատմամբ աննպաստ ինչ որ ալ ըսուէր, սակայն մեր վրայ չէր ծանրանար ան իշխանականութեան տարածումով երկրի մը կարգ-կանոնները խանդարել ձգտողի ամբաստանութիւնը: Թեթեւամտ բանի մը հրատարակութիւններ, ուրաճութեան բանի մը սղարմիչի փորձեր հայկական դատին վարկը Եւրոպայի առջեւ բեկանելու զէնք մաստկարարեցին Հայաստանի ինքնավարութեան երկու գաշնակից թշնամիներուն, թիրաք եւ ուստ իշխանութեանց: Առաջինը՝ ժընէվեան կառավարութիւնը հրատարակութիւններէն եւ անոնց տարածած զաղափարներէն ֆրանսերէն հաւաքածոյ մը հրատարակեց. երկրորդը՝ իշխան Լուպանսֆի միջոցաւ, եւրոպական զիտանալիտութեան վրայ ազդեց կաթնեղջիւր այդ կառավարութիւններէն ըստանորոշ: «Հայերուն մէջ, կ'ըսէր Լուպանսֆի 1893 օգոստոս 9ին՝ Բեդրպուրիի անպիտական զեռուստին (Կապոյտ Գիրք, թիւ 1 (1896), էջ 121), ստուար ե գործոն մաս մը կայ որ բնաւ հոգը չընէր բարենորոգումները կամ բարեփոխեալ վարչութիւն մը, հապտ կը նկրտի կատարեալ անիշխանական վիճակ մը առաջ բերել: Կառավարական ո եւ է ձեւ, ո՛րչափ ալ կատարեալ ըլլայ, կարող չէ զոհանել այս մասը, որուն կէտ նպատակին է ո եւ է իշխանութեան ջնջումը եւ սեփականութեան ընդհանուր բաշխումը:» Քիչ յետոյ ուրաճութեան փորձերը հասան եւ հաստատեցին Նազըմ փաշայի եւ իշխան Լուպանսֆի ամբաստանութիւնները: Իրաւ է որ ուրաճութեան փորձերը սարգ վիժումներ եղան առանց ո՛ր եւ է փաստաբեր հետեւանքի, բայց հեռադիրը՝ հոգածութեամբ թիրաք իշխանութեան, աշխարհի շարս կողմը հոշակեց Հայոց «անիշխանականութեան» ապացոյցը (.):

Օրագրութեան խիստ քննադատութիւնները Եւրոպայի ու Ամերիկայի մաքին մէջ միեւցին Հայոց անիշխանական ըլլալու զաղափարը: Խեղճ Հայոց ազգը սակայն անպիտակ լեզին կատարութեամբ ինքզինքը կ'ուտէր այդ դատաճանութիւններուն համար, որոնց զօհ կ'երթար իր համբաւին հետ նաեւ իր ներկան, իր ապագան:

Բաղձաթիւ պայմաններու զուգընթաց գործակցութեամբն է որ հայկական դատին յաջողութիւն յուսալ ներելի է: Այդ պայմաններուն մէջ առաջնակարգ տեղ մը կուտանք Եւրոպայի հանրային զգացումին ու կարծիքին: Երբ զԿի անփոփոխ նպատակը կը զիմենք, հոն հասնելու ինչ միջոցներ ալ որ գործադրենք, անոնք ե՛մէ շատ

\* \* \*

անգամ ազարդին իսկ ելլեն, սակայն հարկ է որ Եւրոպայի համակրանքը մեր վրայէն պակսեցնելու պատճառներ երբեք չհայթայթեն: Անցեալ տարուան օգոստոս 8ի ուրախութեան փորձին առթիւ, Զուիցերիոյ էն նշանաւոր թերթը, ժընէվ հրատարակուող «ժուռնալ տը ժընէվ» որ ամենաշերտ՝ բարեկամն է Հայոց գատին, շատ խստօրէն դատապարտեց այդ յիմարութիւնները: Այս առթիւ ըսաւ թէ այդ ուրախութիւնները հայ ազգը կը զրկեն արեւմտեան պետութիւններուն համակրանքէն. ուստի ալ այդ յիմարութիւններէն «հայկական գատին համար ծագած վտանգներուն էն պզտիկն է»: Մեզի անկեղծ բարեկամ անշահախնդիր Զուիցերիոյ այդ թերթին գատաստանը իր մէջ կ'ամփոփէ մեր գատին բոլոր անկեղծ բարեկամներուն համոզումը:

Ազգային սեփական կեանք մը պահանջելու մեր փառազօրն է: Պատմական անցեալը ապագային իրաւունքը չի ստեղծեր: Քաղաքականապէս մեռած ազգերուն համար պատմութիւնը տապանադիր մըն է միայն. «Առա հանդ չի»: Կառավարական վատթար գրութիւնն ալ ինքնավարութեան իրաւունքի զօրեղ պատճառաբանութիւն չի նշուածուիր. վարչական բարեկարգութիւններու հարկը կըրնայ զգացնել տալ, աւելի ոչինչ. հարստահարուած ըլլալու զփրաղութիւնէն ինքնօրէն կեանքի իրաւունք չի բղիւրս: Ամէն իրաւունք ուժի մը ծնունդ է, բարոյական կամ նիւթական: Թիւրքիոյ մեծ հաշուէյարդարութեան պահուն — որուն պայմանաժամը ոչ ոք կրնայ նշանակել — հայկական բաժին մը յուսալու համար իրաւունք մը՝ այսինքն ուժ մը՝ մեզի յենարան պէտք է ունենանք: Մենք առ այժմ բարոյական ուժ մը ներկայացնելու տարրերը ունինք մեր մէջ. այդ բարոյական ուժն է որ նիւթականին ճամբան պիտի հարթէ առջեւնիս: Թէ՛ մեզի տիրապետող, թէ՛ մեզի շրջապատող նիւթապէս զօրեղ ցեղերուն վրայ մեր ունեցած բարոյական զերազանցութիւնը մեզի համար մեծ զօրութիւն մըն է: Այդ զերազանցութիւնը կը կայանայ եւրոպական քաղաքակրթութիւնը իւրացնելու եւ տարածելու մեր «արտակարգ կարողութեան» մէջ: Մեզի հետ խառն բնակակից ցեղերուն վայելած թիւի առաւելութեան ուժգնութիւնը կը շափաւորուի մեր այդ «արտակարգ կարողութեան» առջեւ: Թիւրքի գէ՛մ՝ միտք:

Ասիոյ մէջ եւրոպական քաղաքակրթութեան յարմարագոյն միջնորդի մեր համբաւը՝ ազգային սեփական կեանքի մը յաւանութիւննիս արդարացնելու էն պերճախօս փաստաբանութիւնը պիտի ըլլայ: Մեզի պէտք է ուրեմն «Եւրոպական քաղաքակրթութիւն» բացատրութեան սահմանը պարզօրէն ըմբռնենք: Եւրոպա քաղաքական, արեստեական, կրօնական դաւանանքներու ամբողջութիւն մը ունի որուն աւանդապահները ու պաշտօնական ներկայացուցիչները կառավարութիւններն են: Այդ դաւանանքներու ուղղափառութիւնը ընդունելով և զայն տարածելով կըրնանք յուսադիր ըլլալ Եւրոպայի բարեացակամութեան վրայ:

Այդ ուղղափառութեան իտեական արեւմտեան քննելու շնորհ ձեռնարկեր: Ամէն անոնք որ կը դիտեն, կը կարգան,

կը բազմանան, կը խորհին, իրենց յատուկ վարդապետութիւններ կը կազմեն ամէն խնդրի համար: Հայ ազգութեան ընդհանուր շահերուն վերաբերեալ զործերուն մէջ ճշգրիտ իրականութիւնը միայն մեր առաջնորդը պէտք է ըլլայ: Եւրոպայի մեծ մտքերը որոնք մարդկութեան համար աւելի բարեբաւտիկ ապագայ կեանքի մը գծերը կը պատրաստեն, օրուան իշխանութիւնը չեն: Քրաքութիւն մը, Ռեքլի մը որքան ալ ազնուամիտ մեծ խորհողներ ըլլան բայց եւ այնպէս բարեմարտութիւնէ զատ ուրիշ աշակցութիւն չեն կրնար ընել հայ ազգին: Մեր ազգային տեսակէտը Եւրոպայի քաղաքական, տնտեսական, կրօնական դաւանանքներու ուղղափառութեան անդին չի կրնար անցնիլ. պէտք է անոնց համակրելիք, ապա թէ ոչ ազգային գատերնիս կ'ոչնչանայ, ինչպէս արդէն վտանգուած է շնորհիւ քանի մը թեթեւօղիկ հրատարակութիւններու եւ ցոյցերու:

Եւրոպական համակրանքը կամ հակակրանքը արհամարհելու համար կամ յիմար պէտք է ըլլալ, կամ դաւաճան մը: Մեծէն օրինակ մը տանք: Ռուսիա 1878 ին մինչեւ Պալիս հասաւ, Հայաստանն ալ դրաւեց, Թիւրքիոյ օրինաւոր իշխանութեան հետ ալ օրինաւոր դաշնագիր մը ստորագրեց, բայց իր յաջողութիւնները եւրոպական շահերուն ձեռնառու չէին, ուստի դաշնագրին վերաբնութեան հարկը տեսնուեցաւ, եւ յաղթականին ձեռք բերած առաւելութիւնները զեղչուեցան: Ահա ի՞նչ է Եւրոպան:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՌ ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկա, դու վառ ի վառ կը թօթվես  
 Ասաղաից զրօշակէջ ցոյքեր իրօտապէս  
 Եւրոպայի վերայ՝ որ ապականած  
 կը շնչէր վասութեան օդ խաւարամած:  
 կը բարձրանայ ահա, վեր կը բարձրանայ  
 Անկախութեան զրօշակէջ, Ամերիկա,  
 Ճաճանչալից, շրքեղ, նախանձուրդ երկնից,  
 Դեռ երս փառազարդ, դեռ երս ամբիծ.  
 Դու զայն ամուր բըռնած, լուսով ողողուն,  
 կը տանիս պոռալով՝ Ահա փըրկութիւն,  
 Ահաւասիկ նոր ջահ, յուսացէ՛ք՝ թըշուառք,  
 Քանզի կը համարինք պայքարիլը փառք  
 Հարըստահարութեան գէ՛մ անագորոյն:  
 Չըկայ զրօշուտ բոլորն ամպ գիշերտոյն.  
 Ասողերը գեղեցիկ աղօտացընիլ  
 Կարող պիտի չըլլայ ծանակն անվայել  
 Չոր կ'արձակեն ազգայ սպանիչները մեզ:  
 Նայեցէք, նայեցէք, հրեղէն ասպարէզ

Ետեւէն՝ քարչ կ'երթայ, սրփոցեան խընասում,  
Պարծանք եւ արութիւն, պատիւ անպատում,  
Ազատութեան կայծեր անշիջանելի:

Աւա՛ղ, ամենուրեք բըռնութիւն մոլի  
Երկաթի կը կանգնէր գահոյք անխախտու.  
Ամենուրեք արեան կ'ըլլար այգեկում:  
Եւ ոչ ոք զարդարել թուրը կը բաղձար  
Ազատութեան անմահ մըրաննուլ գալար:  
Երբ կը թաւալէին փորերնին փեռել  
Մարդիկ հողին վըրայ՝ կ'ըսէին — Մեռէ՛ք:  
Երբ աչուընին բաղցէն կարծես գուրս կ'եւլէր,  
Երբ երեսնուն վըրայ խուճապը խորշեր  
կը բուցընէր՝ Մեռէք, կ'ըսէին, մեռէ՛ք:  
Ի զուր թըշուառ ազգերը քամակարեկ  
Չեոք կը տատանէին օգնութեան յուսով.  
Թող ըզձեզ, կ'ըսէին, փըրկեն մահ ու սով:  
Դու անգամ, Չարհուրանք, ալ կարող չէիր  
Խըռովայոյզ ընել սըրտերը զազիր:  
Կոտորածը մարդկան՝ քու կը նեակը —  
Դա երկիրը կ'երթամ, կ'ըսէր, ես եմ՝ սեր:  
Կը մարտիրոսանար ամբողջ Հայաստան,  
Չինամթաղ կը գանար մեծ մեռելաստան —  
Բօթը կը լըսէին անկարեկցաբար:  
Խեղճ Մահեղանիա, աղբիւր անըսպատ  
Արինահասութեան, ի զուր կը հեծէր.  
Ի զուր եւ Յունաստան կ'եւլէր կը փորձէր  
Գունաս՝ սակայն խըրոխա, ճակատը պըսակ  
Ասփողելուն ծաղկի, քաղցըր յիշատակ  
Որ մեզ գեռ կը բուրէ շընորհ հընութեան,  
Դարձեալ խանգ ներշընչել անշունչ անկենդան  
Եւրոպայի սըրտին՝ քաջութեամբ վըսեմ  
Ախոյեան կանգնելով խուժ Օսմանցուց դէմ:  
Տէրութիւնք կ'ըսէին՝ սառն ուրախութեամբ.  
Լա՛ւ, չըլլանք օգնական, ազգերն ապըստամբ  
Այսուհետեւ խրախոյս պիտի չը զըտնան:  
Թող կոխելով զըլխուն վըրայ անպաշտպան  
Վիշապ ամբոխին պինդ պղընձի գարշապար  
Յաղթահարէ գանի՝ ճըմլէ տիրաբար.  
Երբ կեղեքենք խուժանն անմիտ, սինլըքոր՝  
Չը խեռիլ պարտի. ապա թէ ոչ գոռ  
Թող հընչէ մահափող անբաւ սրածութեան.  
Այսպէս կը խաղաղենք — ըլլանք միաբան,  
Այս գարն առաջ կ'երթայ՝ ալ յետ կը գանանք:

Այ գարանակալներ որ արինազանգ  
կը խընդրէ կողպուտ, արգեօք չարաչար  
կը զըրպարտեմ ըզձեզ, եւ չեմ անաչառ:

Խաւիտ, ինձի դու սուր պատասխան:  
Այսօր ժողովուրդներն ահա կը դողան  
Որ ձեր շըքեղ կտորերը չը թաւալին  
Իրենց զըլխուն վըրայ. երկնից սիրելին,  
Արքան աշխարհակալ, արքան մեծափառ,  
Չը ցանկայ երեսն գալ անպատըսպար  
Մարդկութեան յանգիման բոլոր իր փաօք.  
Հանդերձ ոսկեճամուկ, թագ արինոռոգ,  
Չեոքը ցուպ ոսկեղլուխ, բըքերը խոժոռ  
Փողփողուն աստեղաց նրման լուսաւոր —  
Պատուհաս սոսկալի՝ զոր գեռ հաղի հազ  
Կարողացանք նուաճել, եւ ժանտ է նըւազ:  
Մեղկացընել հողին վըհատութեամբ նախ,  
Թոյլ չըտալ գաղափարն ըլլայ տաշտամաղ,  
Ազատ եղբայրութիւն՝ ձեռնասու գերոյն,  
Արգելուլ ազգաց տալը սիրոյ ողջոյն,  
Փըչել արշալուսին վըրայ փըրկութեան,  
Եւ մերթ շողացընել սուսեր անպատեան  
Ըսպանալից՝ որ մենք սոսկանք ու լըռենք,  
Դարձընել վերնագոյն հըրամանն օրէնք,  
Կապել ըզմեզ, ըզքեզ վանդակը բանտել  
Ո՛վ առիւժ զայրացմանց, ըզքեզ նախատել՝  
Ազատութիւն, խորան սըրբութեան,  
Քարերը նոր հիմանց ընել տեղահան,  
Բանտին՝ խոհեմ, ըսել, և տապարին՝ քա՛ջ,  
Բազմութեան ցուցընել երես անամաչ,  
Չըուցել՝ աստուածեղէն եմ, խոնարհեցէ՛ք.  
Լըռէ՛, ամբոխ, լեզու ունիս դու խեցքեկ.  
Եւ նըւաստացընել զաշխարհ համօրէն  
Որ գոհ խաղաղութեամբ ա՛լ թագաւորեն —  
Սա է ահաւասիկ դաւ ընդհանրական  
Չոր անգուլ կը նիւթեն և կը հընհընան  
Կոյր վեհապետները խարդախամիտ  
Որոնցմէ կ'երկընչին մարդիկ իբրեւ վիթ:

Սակայն երիտասարդ ժողովուրդ մ'ազատ  
Եւ ինքնիշխանութեան տարփող հարազատ,  
Գոռաց՝ վատարի էք: Եղար Սուլդանին  
Օգնական, Եւրոպա՛, խըժութեան գինին  
Արքեցուց ըզքեզ, դու կը նեխահոտիս:  
Մի՛ սոնքար մի՛ խօսիր այդպէս բարձրավիզ,  
Կ'արհամարհենք ըզքեզ՝ յաջողութեանց բո՛ղ,  
Ամէն կողմըդ ահա պաշարեց բորբոս:  
Կը լըսէ՛ք, կը լըսէ՛ք կառանչ եւ կական —  
Կը հեծէ ժողովուրդ մը թըշուառական:  
Տըղայք կ'ըլլան սրամահ, կանայք սիրասուն  
Կըրծոց վըրայ զընտակ մը նուէր կ'առնուն —  
Այսպէս կընամեծար է Իսպանիացին:

Լրքեաներն օգնութիւն մեզմէ խընդրեցին :  
 Եւ ի՞նչ ընելու ենք արդեօք, Եւրոպա՛ .  
 Թող սալու ենք, այնպէս չէ՞, որ խեղճ Քուպա  
 Դառնայ պատրաստարան լոկ օրորներու .  
 Քամուն ըսելու ենք՝ Ա՛ն տար մեզմէ հեռու  
 Այդ ձայնը լալաղին զոր մեզ կը բերես .  
 Պէտք է գառնայ աշխարհ ամենայն երէզ  
 Անբողոք՝ աշակոյր իշխանութեան վէմ .  
 Ո՛չ, աա չենք ընգունիր, ո՛չ, բըռնութեան թեմ  
 Պիտի չըլլայ երկիր գաւառ ամենայն,  
 Եւ մենք պիտի կանգնինք մօրնչմամբ միաձայն  
 Մարգարտոշոշ սրբոյ վէմ ճօճելով սուր,  
 Պոռայով թըշնամայն՝ Ազատութիւն տուր :  
 Տուր զայն որ միմիայն մարդկան է վայել՝  
 Չէ թէ վատ, զըլխագերծ ողբալ եւ վայել :  
 Երբ գայ Ազատութիւնը՝ ձեռքը վանդակ  
 Ուր ան սընոյց մեծցուց այնչափ արծուեձաղ՝  
 Դըռնակը բանալով թոյլ կուտայ թըռին  
 Երթան եւ բընակին սէզ սարերն երկրին :  
 Ահա նոր արեգակ կ'ելլէ փողփողուն,  
 Թեւասփիւս ճախրելով կ'երգին՝ Օրհնութիւն :

Մե՛ծ հանրապետութիւն, չեղար ուխտ սգանց .  
 Դարձար դու օրինակ ազգաց եւ ազանց,  
 Դարձար ժամանակին անազատասեր  
 Որ սկեպտիկ հեղշութեամբ՝ Ի զուր է, կ'ըսէր,  
 Ամենայն նըկըրտում ի նպաստ այլոց .  
 Խաղաղութեան բաղձանք, չըլլանք ալեկոծ :  
 Թող այլք արտասուազոշ ճըչեն — Ի՞նչ փոյթ մեզ :—  
 Վասն սրոյ մենք բուր չայերս վըշտատես  
 Կ'ազազակենք առ քեզ . Ո՛վ սէզ ժողովուրդ,  
 Լուսալրօշը պըրոցուր երկիրնքն ի վեր լուրթ,  
 Եւ թող ամենայն աստըզ անոր վըրայ  
 Պայծառ մըշտաճաճանչ արեգակ գառնայ :

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

Բարիզ, 1898 յուլիս .

### ԼԵՒՈՆ ԹԱԳԱԻՈՐԻՆ ՍՈՒՐԸ

— Այսօր ալ Անկախութեան Պատերազմին թանգա-  
 րանը երթանք պտըտինք, ըսաւ մէկը, երբ ցերեկուան  
 ճաշը լմնցնելէ ետքը՝ օրուան մնացորդը ի՞նչպէս անցընել-  
 նիս կը խորհէինք :

Փախստականներու խումբ մըն էինք, Աթէնքի մէջ  
 կազմուած . ոմանք քանի մը տարիէ ի վեր հոն էին, մէկ  
 երկուքը վեց եօթը ամիսէ ի վեր, իսկ մնացածը Օգոստոսի

Չարգերէն փախած : Տարօրինակ ու այլազան խումբ մը ու-  
 բուն անգամները առանց որ եւ է ներքին նմանութեան,  
 առանց համակրանի ձեռնարկան ումին, ափ յափոյ, զրեթէ  
 բոնի, եկած միացած էին իրարու : Նիւթական բարեկե-  
 ցութիւն մը — բարեկեցութիւն՝ Նպաստամատուց ֆանձ-  
 նաժողովներու կարօտ չըլլալու աստիճան — միակ կապն  
 էր մեր խմբին անգամները միացնող :

Միջերնիս կար հացագործ մը, գաւառացի վաճառա-  
 կան մը, զրաշար մը, օտա-պաշի մը, տէտո մը, նկա-  
 ըիչ մը, սպասաւոր մը, խմբագիր մը, զերձակ մը, աստղ-  
 ձագործ մը եւ Գալուստ անուն երիտասարդ մը :

Երբ սարքի ելանք մեկնելու համար Գալուստ կը մրա-  
 փէր աթոռին վրայ, իր սովորութեան համեմատ :

Չայն տուինք իրեն :

— Գա՛լուստ, մէկտեղ չե՛ս ի գար, Թանգարանը պի-  
 տի երթանք :

Ոտքի ելաւ, ապուշ նայուածք մը նետեց չարս բուրբը,  
 մտքի ճիգ մը ըրաւ ո՛ր գտնուելը հասկնալու համար,  
 յետոյ գէմքը ծամածոց տխուր յայտ մը ձեւացնելով  
 եւ ըսաւ .

— Հապա՛, կուգամ, պարտններ, հա՛, հա՛, հա՛ :

\* \* \*

Քասնըվեց տարեկանի մօտ գաւառացի փախստական  
 մըն էր, նիհար, գունատ այտերով : Հապի տարիէ մը  
 ի վեր թողած էր իր գեղը եւ Պոլիս եկած՝ եղբօրը  
 քով — որ խանի մը մէջ խահուէճի է եղբր, — գեղին զբոյ-  
 րոցը ստացած նախնական ուսմունքը քիչ մըն ալ առաջ  
 տանելու եւ մարդ ըլլալու համար : Իր տարիքը եւ զիտու-  
 թեան չափը չեն ներեր իրեն որ եւ է պարոց երթալու եւ  
 սկսեր է յատուկ գասեր առնել խանին մէջ, շրջանաւարտ  
 աղքատ ուսանողէ մը :

Օղոստոս 14ին, Պոլսոյ կողմը, իր խանին խուցը  
 քաշուած կ'աշխատի եղբր, երբ շիոթութիւնը ծագեր ու  
 Չարգողներու խումբերը մէջտեղ ելեր են : Տուն-տեղ ու  
 նեցողները ձգեր փախեր ու խանը միայն քանի մը բեռ-  
 նակիր, խումբ մը գաւառացի, օտա-պաշին, խահուէճին  
 ու Գալուստը մնացեր են, սրտնք զուր զոցեր ու փակուեր  
 են մէջը :

Ըսի թէ մեր խմբին մէջ օտա-պաշի մը կար . ճի՛շդ  
 այդ խանինն էր : Իրմէ լսած էինք այդ շարաշուք օրերուն  
 իրենց պատմութիւնը :

— Մինչեւ մութը կոխելուն հանգիստ մնացինք, ըսած  
 էր, լայց ժամը զիշերուան Չին խանին զուր սկսան կոտ-  
 րել . բաւական դիմացկուն էր, ժամ մը աշխատեցան բա-  
 նալու համար : Քառսուն հօգիի չափ քիրա ու թիւրք բար-  
 բարսներ լեցան խանին մէջ եւ սկսան ծակուծուել խու-  
 զարկել : Ես, Գալուստը, իր եղբայրը՝ խահուէճի վարդա-  
 նը եւ ուրիշ ընկեր մը անդլիացի վաճառականի մը պատ-  
 կանող գրասենեակի մը մէջ պահուրտած էինք զուր ա-  
 ղէկ մը կղպած : Դիմացի սենեակը ուրիշ երեք հօգի կար,  
 որոնք նոյնպէս պահուրտած էին, վարն ալ քանի մը հօգի

կը դանուկը: Լոյսը մարած՝ մութին մէջ՝ ահագոգոյ կ'ազօթէինք. զէնք մը չի կար բովերնիս:

Ու ահա՛ յարձակողները վեր կ'ելլեն, վարի մարտոց «գործը ընցնել» է ետքը: Գրասենեակին գուռը ափ կ'առնեն:

— Բացէ՛ք, բան չպիտի ընենք:

Պատասխան տուող չի կայ: Օտտ—պաշին մեծկակ զարանի մը մէջ կը մանէ ու գուռը զոցել կուտայ զրուէն: Գալուստ, որ նախապէս տախտակամածի փայտերէն մէկը տեղէն խախտած էր, ծակին մէջ կը սխմուի, փայտը գըլխին ծածկելով: Խոհուէ՛ն վարդան զրամարկղին հոտեր կը կծկտի, իսկ միւս ընկերներն պատուհանին բով պատուրաստ կը կենայ «րպէս» զի գուռը բացուելուն պէս ինքզինքը փոզոց նետէ:

Գրուէն օտքի հարուածներ կը տեղան զրան, ատեն ատեն ոտնալով:

— Բացէ՛ք, մի՛ յոգնեցնէք մեզի:

Վերջապէս կղպանքին սրուած լախտի ուժով հարուած մը կը խորտակէ զայն եւ խուժանին մէկ մասը, — ուժ հոգի, — իր յաղթական մուտքը կ'ընէ:

Ներս մտնողներուն առաջին զործը կ'ըլլայ զրասն զանին վրայ զրուած աշտանակը վառել եւ պատուհանին բով կեցող Հայր, որ ժամանակ չէր ունեցած կամ վարանած էր ինքզինքը վար նետելու, բռնել:

Խոսնի մը անկիւնը, զիշեր ատեն, մոմով մը միայն լուսաւորուած սենեկի մը մէջ տեղի ունեցած այդ տեսարանին ամբողջ շարաշուք արհաւիրքը կ'երեւակայէր:

Գալուստ, ինչպէս ըսի, տախտակամածին տակ կը մտնուած, տախտակը զլսին, պզտիկ ծակէ մը ամէն բան կը տեսնէր ու ամէն բան կը լսէր:

— Որո՞նքն է այդ զրասնեակը, կը հարցնէ ոճրագործներուն պարապուստը, խօսքը ձեռքը ինկած Հայուն ուղղելով:

— Պ. Ճոնսըն Անգլիացիին, կը պատասխանէ խեղճը զրոգահար:

— Ստա ես:

— Չէ՛, ճշմարիտ է, կը պատասխանէ մէջերէն մէկը, ես շատ անգամ մարտէն ապրանք բերած եմ հոս, Միսսիս Ճոնսընին սենեակն է ասիկա: Անոր համար ըսի որ պարապ տեղը գուռը կը կտրենք կտր, օգուտ չի կայ մեզի այս տեղէն:

Յայտնի է որ կառավարութիւնը խտտորէն արգիլած էր խուժանին օտարազգիներու վնաս հասցնել:

— Ինչ սր է, սա կեանքը կը սատկեցնենք: Աս ալ բան մըն է:

Ու սօփայի հարուածները կը սկսին գաւառացիին զլսին, մինչեւ սր շնչասպառ կը մնայ:

— Արդեօք զեռ ուրիշ մարդ կայ սենեակին մէջ պահուրած, կ'ըսէ պարապուստը, խօսքը բովիններուն ուղղելով:

Ամենքը չորս կողմերնին կը նային:

— Չէ՛, ուրիշ մարդ չի կայ:

— Ուրեմն սրբոր օտքէն քաշեցէ՛ք ու զորս նետեցէ՛ք:

Եւ ցոյց կուտայ զիսկը:

Երկու մարդ կը կատարեն հրամանը եւ մէկիկ մէկիկ ամենքը զորս ելլել կը սկսին: Վերջին մնացողը երբ օտքը սեմէն զորս կը գնէր, պզտիկ, անգագալի շուկ մը կը լսէ ու յանկարծ կասկած կ'ունենայ թէ կրնայ զեռ մարդ պահուրած ըլլալ սենեկին մէջ:

— Կեցէ՛ք սա մոմով չորս կողմը աղէկ մը նայիմ, կ'ըսէ ընկերներուն եւ կը սկսի սենեկին շրջանը ընել, մինչ անոնք զորսը կը մնան:

Գրամարկղին բովէն անցած ատեն կը ծփ զլուսը կ'երկնցնէ զէպի ետին:

— Գտայ, կը գոչէ ուրախութեամբ:

Բայց յանկարծ խոհուէ՛ն վարդան վրան կը յարձակի, զեռին կը տապալէ զայն ու կը սկսի հարուածներ տեղալ: Մոմը զեռին կ'իյնայ ու կը մարի: Վարդան կը ռուելով հանդերձ յուսահատօրէն կը գոչէ:

— Ա՛խ, զէ՛նք մը, Կանա՛կ, զմեզ մը ըլլար բովս... փայտի կտոր մը ըլլար... բան մը չի կայ...

Գորտի մարդիկը բնականաբար ներս կը խուժեն եւ կ'ուզեն ազատել իրենց ընկերը վարդանի ճանկերէն: Վարդան, որ հուժկու եւ յաղթանկամ գաւառացի մըն է եղբր, զիրաւ ետ չի տար իր «րսը, կատաղի, անլուր կոխ մը կը մզ խեղճը ուժ հոգիի վէմ:

— Ա՛խ, զէ՛նք մը, զէ՛նք մը ըլլար բովս...:

Վերջապէս ուժաթափ կ'ըլլայ ամէն կողմէն եկող սօփայի հարուածներուն տակ: Մէ՛յ մըն ալ կը կրկնէ խեղճը ձայնով:

— Ա՛խ, զէ՛նք մը...

— Լո՛ւ, կեանք:

— Չէ՛նք մը...

Ա՛յ հոգին կը փչէ:

Թիւրքերը զորս կ'ելլեն, այս անգամ զիսկը սենեկին մէջ թողլով:

Եւ մինչեւ առտու Գալուստ, իր ծակին մէջէն, ակնապիշ կը նայի իր եզրօրը զիսկին, առանց տեղէն շարժիլ համարձակելու, առանց ճիկ մը, հեծկտանք մը հանելու:

\* \*

Առտուն զրասնեակին տէրը կուգայ զեսպանատան թարգմանի մը եւ խափազի մը ընկերակցութեամբ: Այն ատեն միայն Գալուստ կը համարձակի իր ծակէն զորս ելլել: Անգլիացիին օտքը կ'իյնայ գոչելով զրեթէ խելայեղ:

— Ազատէ՛ ինձի Թիւրքերուն ձեռքէն:

Ու հետեւեալ օրը, օտտ—պաշին եւ ուրիշ խումբ մը Հայերու հետ, թարգմանի մը առաջնորդութեամբ շոգենաւ կը մանէ, զրպանը 200 օսկիով — իր եզրօրը ժառանգութիւնը որ բարեբաղդաբար Պ. Ճոնսընի բով պահուրած է եղբր:

Բիրէ հասնելէն բանի մը օր ետքը տեսայ զինքը: Այն բառմեղի տեսարանը որուն ներկայ գտնուած էր ա՛յ խանդարեր էր իր իմացականութիւնը: Ապուշ, սարսափաւ հար նայուածք մը ունէր խեղճը. ատեն ատեն անխոր-

հուրդ երկիւղ մը կը պաշարէր զինքը ու կը գոչէր գազար:

—Կուգան կոր...

Եւ այս վիճակը կը տեսէր շարունակ: Ի զճճր ամենքս ալ զինքը համոզել կը ջանայինք որ վախնալու բան մը չունէր, ազատ, բաղաբակիր թերի մէջ կը գտնուէր: Ֆէսի մը տեսքը, թիւրք անունի մը արտասանումը, բաբական էր իր ամբողջ էութիւնը սարսելու: Երբ տաճկական գրօշակ կրող շոգենաւ մը գար Բիրէի նաւահանգիստը՝ հեռուները կը վախչէր շտեմնելու համար: Չինքը տարած էին բծիկներու, սակայն իրենց պատուէրները ու գեղերը անգոր մնացած էին, ու ա՛լ կամաց կամաց սկսած էինք զինքը հիւանդ մը չնկատել, այլ վախկոտ փախուկ մը:

Հակառակ իրեն հետ յաճախ կատակներ ընելու, իր ներկայութիւնը միշտ տխուր տպաւորութիւն մը կ'ընէր վրաս: Շատ անգամ ներկայ գտնուած եմ երբ օտապաշին կը պատմէր իրենց եղերական պատմութիւնը՝ նոր անձի մը, գոց ըրածի պէս, գրեթէ միշտ նոյն բառերով ու նոյն ձեւերով: Գալուստ քովը նստած մտիկ կ'ընէր անմըտուն, բերանը կիսաբաց, օտապաշին շրթունքներէն կախուած, իր թէ առաջին անգամ կը լսէր այդ պատմութիւնը, առանց երբեք խօսքին խառնուելու: Միայն, և ասիկա ամէն անգամ առանց բացառութեան, երբ պատմողը կ'ըսէր, «Լոյսը մարած՝ մութին մէջ կ'աղօթէինք. գէնք մը չի կար քովերնիս», Գալուստ՝ հապտապա՝ աչքերը խոշոր բացած, կը միջամտէր:

—Հա՛, իրա՛ւ է, գէնք մը չի կար քովերնիս...

Յետոյ նորէն կ'իյնար իր լուութեան մէջ:

\* \* \*

Բիրէ գտնուող Հայերէն ոմանք հաշիշի գործով կը զբաղէին, —Յունաստանի մէջ հաշիշի մշակումը ներքի է եւ առուծախը արտօնեալ, որովհետեւ ժողովուրդը բնաւ չի գործածեր այդ թոյնը. —օխան հինգ ֆրանքի ծախու կ'անէին՝ Եգիպտոս զրկելու եւ քառսուն ֆրանքի ծախելու համար, թէև յաճախ կը բռնուէր իրենց ապրանքը եւ մեծամեծ տուգանքներու կը պատապարտուէին: Այդ Հայերէն ոմանք Գալուստին կուտան քիչ մը հաշիշ, ծխելու համար: Մէկ, երկու, երեք անգամ ու ահա՛ Գալուստ հաշիշամուլ մը կ'ըլլայ, որուն աղէտալի ազդեցութիւնը իր վրայ կը տեսնուէր գործածութեան սկսելէն քիչ ետքը: Մենք գրեթէ կը քաշալերէինք զինքը իր մոլութեան մէջ, որովհետեւ կը տեսնէինք որ ինքն տղան գոնէ հաշիշ ծխած միջոցին կը մոռնար իր ահելի մղձաւանջը:

Իր վրայ հաշիշամուլի ամէնէն յայտարար նշանն էր աչքերուն տարտամ նայուածքը եւ ապուշ անգիտակից, ջղային ծիծաղը, հա՛, հա՛, հա՛, որ ամէն առթիւ, արտասանած ամէն մէկ խօսքին վերջը կը գնէր:

—Գա՛լուստ, ո՛րիկ կուգաս:

—Միջոցին սրճարանէն, հա՛, հա՛, հա՛:

—Գա՛լուստ, կերակուր ուտելու երթա՞նք:

—Երթա՞նք հասպա, հա՛, հա՛, հա՛:

Եւ տխուր բան մըն էր ամէն օր ներկայ գտնուել այդ իմացականութեան հաշիշի մութերուն մէջ կամաց կամաց շիջումին:

\* \* \*

Բաթիսիայի ճամբէն երբ կ'երթայինք գէպի Անկախութեան Պատերազմի Թանգարանը, Գալուստ առջեմնէս կը բալէր իր վարանոտ, գայթիգայթ քալուածքովը եւ մէջերէնս մին կամ միւսը ատեն ատեն կը կրկնէր, հազարերորդ անգամ, միօրինակ կատակը.

—Մօ՛, Գա՛լուստ, թիւրք մը կուգայ կոր ետեւնուս:

Ու Գալուստ ահաբեկ ցնցումով մը պոխլը կը դարձնէր, անանական նայուածք մը պտտցնելով շուրջը եւ կը գոչէր.

—Մի՛ ընէք, եղբայրներ, մի՛ վախցնէք զիս, հա՛, հա՛, հա՛:

Թանգարանին մեծ սրահը պտրտած ատեննիս անկիւն մը դրուած թրքական զօշակ մը տեսանք, հինումին լաթի կտոր մը գնտակներէ ծակծկուած, որ Յոյներուն ձեռքը ընկեր է Մորայի կոիւնտրէն մէկուն միջոցին: Գալուստը, որ քիչ մը անպին կը գտնուէր, մեր քով կոչեցինք:

—Հո՛ս եկուր, նայէ՛ ինչ կայ:

Եկաւ կարկամօրէն, աչքերը խոշոր բացած ուզողեցաւ մեր ցոյց տուած անկիւնը: Նախ չհասկցաւ այդ կտոր միւր լաթին ի՞նչ ըլլալը, բայց երբ յանկարծ մահիկի նշանը տեսաւ վրան, աղաղակ մը արձակեց, ետ ետ վազելով:

—Աստուած... թուրքի զօշակ է եղեր:

Ու ձեռքերովը երեսը ծածկեց:

Դուրս ելլելու ժամանակ մէջերնէս մէկը առաջարկեց որ խնդրենք թանգարանին պաշտօնեայէն որպէս զի ցոյց տայ մեզի Լեւոն Թազաւորին սուրը որ իր սենեակը գարանի մը մէջ պահուած էր:

Այդ սուրը ուրիշ անգամ տեսած էի արդէն: Դաշոյն մըն էր, սակեզօծ նրբակերտ պատեանով մը որուն վրայ ԼԵՒՈՆ ԹԱԶԱՎՈՐ ՀԱՅՈՑ քառերը փորագրուած էին, յետոյ թուական մը, Ի ԹՎԻՆ ՔԲ ՌՄԻ: Այդ գաշոյնը շինած էր, ինչպէս պատմեցին ինձի, Պոլսոյ Շուկայի վարպետ հայ արհեստագէտ մը և յաջողած էր իբրև հարգատ բան մը կլլեցնել հնութեան հաւաքիչ Անգլիացիի մը ու ծախել մեծկակ գումարի մը փոխարէն: Անգլիացին Աթէնք գտնուած միջոցին նուէր տուած էր թանգարանին, խաբեբայութիւնը հասկնալէ ետքը: Հիմա հո՛ն պարանի մը անկիւնը նետուած կը մնար:

Մեր մէջէն անոնք որ չէին տեսած այդ սուրը ու նաև չէին զիտեր անոր պատմութիւնը հպարտութեամբ խառն սքանչացումով մը սկսան քննել, մինչ Գալուստ գուրս կլլալու դրան մօտ մեզի կը սպասէր, առանց գիտնալու թէ ինչո՞ւ այդ սենեակը մտած էինք: Երբ տեսաւ որ կ'ուշանանք եկաւ մինչեւ սենեկին դուռը եւ ըսաւ.

—Ի՞նչ կ'ընէք հոգ. ինչո՞ւ չէք ի գար:

—Եկու՛ր որ տեսնաս: Հայկական գէնք մը կայ հոս, Լեւոն Թազաւորին սուրը:

— Մենք զէնք չունինք, ըսաւ Գալուստ անբացատրելի շեշտով մը, եւ թերահաւատ ձեռով զուսը երերցուց:

— Եկա՛ւր կ'ըսենք կոր:

Եւ թեմէն քաշելով ներս մացուցին ու սուրը ներկա յացուցին իրեն:

Նախ քիչ մը ետ գնաց, առանց ձեռք զպցնել համար ձակելու, յետոյ զաշոյնը առաւ եւ սկսաւ ձեռքին մէջ խաղցնել:

— Նայէ՛, վրան զրուածը կարգա:

Ու ցոյց տուին փորագրուած բառերը:

Կոմաց կամաց արտասանելով կարգաց բարձրաձայն. « Լեւոն թագաւոր Հայոց ի թը վին Գր. Ռ Մ ի »:

Երբեք չպիտի մոռնամ այս տեսարանը...

Դիմացը կեցած էինք ամենքս: Երբ ընթերցուը լմնցուց՝ բերանը բաց ամենուս երեսը նայեցաւ, մարդու մը պէս որ կը կասկածի թէ արդեօք իմ՞զ մը կը խաղան իրեն: Անգամ մըն ալ կարգաց արձանագրութիւնը եւ գոչեց:

— Իրա՛ւ է... Հայ թագաւորի սուր է... Լեւոն թագաւորին սուրը... Իրա՛ւ է:

Ու այս բառերը արտասանած ասին աչքիւր կը բացալովակին, գէմը կը գունատուրէր ու տարօրինակ այլափոխութիւն մը անդի կ'ունենար իր մէջը:

— Հայ թագաւորի սուր... Հայ թագաւորի սուր, կը կրկնէր:

Ամենքս, յուզուած, զինքը կը դիտէինք:

Դաշոյնը հանեց պատեանէն ու սկսաւ համբուրել երկաթը: Ինչպէս փարած էր այդ երկաթին: Խենթի մը պէս կը համբուրէր, շուտ շուտ, ազահաբար, մոլեգնաբար, վախնալով որ ձեռքէն կ'աննենք զեռ կարօտը շառած:

— Ա՛խ Լեւոն թագաւոր, մեռնի՛մ, խուրպա՛ն ըլլամ: Յանկարծ գոչեց:

— Եթէ զէնք մը ըլլար աղբարս չէր մեռնիր... ապուշ էինք... զէնք մը չէինք պահած քովերնիս... բայց ասիկ ետքը, այս սուրին վրայ երգում կ'ընեմ, առանց զէնքի չի պիտի պտըտիմ... վա՛յ եթէ թուրքի մը հետ գործ ունենամ:

— Ծօ՛, շատ լեզուից մի՛ տար, տաճիկ զրօշակը զուրսը կեցիր է, ըսաւ մէջերնէս մին՝ պալ շուր մը լեցընելով մեր յուզմունքին վրայ:

Այն ասան Գալուստ շեշտ մը նայեցաւ խօքը արտասանողին երեսը, յետոյ առանց պատասխանելու, պինդ ու հաստատ քայլերով գուրս ելաւ սենեկէն, ուղղուեցաւ այն անկիւնը ուր զրուած էր թրքական զրօշակը, ձեռքովը պարզեց զայն ու թքաւ վրան:

Բժշկուած էր:

ՎԱՀՐԱՄ

ՀԱՅ ՑԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսօր կը կատարեմ ձեզի ըրած խոստումս՝ «Նոր կեանք»ի ընթերցողներուն տալով հայ ցեղագրութեան վրայ անսովոր մը, հայասեր գիտնական բարեկամիս, Պ. Շանդրի, 1893ին հրատարակած կարեւոր մէկ գործէն քաղուածներ ընելով:

Այս աշխատութիւնը կը բաժնուի երեք մասի.

- 1. Աղգածութիւն, Պատմութիւն և Աղգարանութիւն.
- 2. Կազմախօսութիւն և Մարդաչափութիւն.
- 3. Գանկաչափութիւն:

Ասոնցմէ վերջ պիտի ընեմ Քիւրսերուն վրայ համոտ անսովոր մը, այդ երկու ժողովուրդներուն միջեւ զուգահիշի մը կարենալ կատարելու համար:

Ա

ԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ, ՊԱՏՄԹՆ., ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Այս առաջին մասին մէջ կ'ետեր կան, ինչպէս պատմութիւն, զրականութիւն, կրօնք, տարազ, բնակարան, սովորութիւն կայն, սրտնք զիս շատ չպիտի կեցնեն, որովհետեւ ատոնց մէկ մասը առ հասարակ ծանօթ է մեզի, միւս մասին վրայ ալ «Նոր կեանք»ի մէջ ասիկց առաջ խօսուած է արդէն: Համոտաակի անցնիմ էն շահեկան կ'ետերուն վրայէն:

Ա. Հայ երուն ծագումը. — Մինչեւ այսօր որոշ չէ հաստատուած թէ Հայերը Սեմական թէ Արիական ցեղէ առաջ եկած են, թէեւ հաւանականը երկուքն խառնուրդ մը ըլլալ կը թուի: Սակայն ինչ որ ալ եղած ըլլայ, սա ճիշդ է որ անոնց ծնունդ տուող ցեղերը շատ կանուխէն հաստատուած են լեռնային դաւառներուն մէջ ուսից կը բղխին Տիւրիսը, Եփրատը, Արաքսը:

Ամէնէն հին յիշատակագիրներէ կը հաստատուի որ այդ ցեղերը երբ հարաւէն հիւսիս ելլելով սկսած են զբաւել կովկասի եւ Տարսուսի մէջտեղ գտնուած լեռնազառերն ու հովիտները, իրենց զէմ գտած են տարբեր ծագում ունեցող զանազան ժողովուրդներ, որոնց հետ կուսիլ պէտք եղած է այդ հողերուն մէջ յառաջ քաշելու համար: Վերին Միջագետքի մէջ այդ ժողովուրդներէն կային սեմական ցեղեր, Արարատայ եւ Տիւրիսի ու Եփրատի մէջ տեղ ինկած նահանգներուն մէջ՝ Քիւրսեր, եւ Արաքսի հիւսիսը՝ Նախալրացիք: Ասոնք բոլորն ալ հաւանական է որ երկրին բնիկները եղած ըլլան, իսկ ինչ որ անտարակուսելի է, սա է որ անյիշատակ ժամանակներէ ի վեր հոն հաստատուած էին:

Առաջին հայ ցեղերը կ'երեւայ թէ Միջագետքի մէջ ցրուած ըլլալու են, ու վերջը հեռզհեռէ տարածուելով ելած են մինչեւ Արարատ եւ Արաքսի եզրերը, աւելի՛ բռնուկ ժողովուրդներուն հետ ձուլուելով քան թէ զանոնք նիւստեղով:

Բ. Պատմութիւն. — Խորենացին ալ իր պատմութեան մէջ Հայերու ծագումը բացատրելու համար վերը ցուած ճամբէն կը բաշէ տարբեր ձեւի մը տակ: Հայի իրեններով Բաբելոնէն կ'ելլէ ու կը հաստատուի Վանայ լճին մօտերը: Իր յաջորդները Արմենակ, Արամայիս, Ամասիա, Հարմայ, Արամ, բոլոր ասորական անուններ, կը սկսին երկիրը ընդարձակել: Արայէ վերջ Հայկայ սերունդներուն երկիրը Ասորեստանի պարզ մէկ նահանգը կը դառնայ. իր անկախութիւնը կը դանկ Պարոյրի օրով, այդ կայսրութեան կործանումէն վերջ: Տիգրան (363 տարի Ք. Ա.) Հայաստանի փայլուն թագաւորութիւնը կը կազմէ որ կը տեւէ մինչեւ Վահէ (328 Ք. Ա.): 149ին դարձեալ ինքնօրէն կ'ըլլայ Հայաստան, բայց ոչ իր իշխաններով այլ Արշակունի ցեղին ձեռնհասութեամբ. ու կ'ունենանք մեր ամէնէն հռչակաւոր թագաւորները, երկիրը կ'ընդարձակի նոր թագաւորներու աշխարհակալութեամբ. Լազիստան, Ասորոց Միջագետք, Կասպից ծովը, Ալանաց երկիրը Հայաստանի սահմանները կը կազմեն: Արաւազդի օրով սակայն երկիրը կ'զուրկատարայ իշխանութեան տակ կ'իջնայ:

232 (Ք. Ե.) ին Սասանեանք կը տիրեն Հայաստանի, բայց Տրդատ կը յաջողի ազատութեան օրեր եւ նոր կրօնք մը տալ այդ երկրին:

387 ին Հայաստանի արեւելքէն Պարսիկները եւ արեւմուտքէն Հռոմայեցիք տէր կ'ըլլան:

637—920 Արարներու իշխանութեան տակ կը մնայ Հայաստան: Թ. դարուն սակայն Աշոտ Բագրատունի կը յաջողի Արարներու հարկատու հայ իշխանապետութիւն մը կազմել: Տեղն է յիշել հոս որ Բագրատունիները, որոնք հաւանականաբար Նաբուգոդոնոսորի Բաբելոն բերած հրեայ գերիներու սերունդէն յառաջ եկած են, Հայաստանի ամէնէն մեծ վարչապետները արտադրեցին ու որքան ազդեցութիւնն ին մեծ, այնքան ալ արդիւնքն ին իոչոր եղած է: Այս իշխանութիւնը կը ջնջուի Բիւզանդիանի կայսրութեան ձեռքով, բայց Բագրատունի իշխաններ կը յաջողին կիլիկիոյ մէջ թագաւորութիւն մը հիմնել. դաշնակից կ'ըլլան Լատիններուն, խնամութիւն կը հաստատեն Լատին դահերու հետ, բայց Եզրայտոսի սուլթանները Հայերուն այս վերջին փառքն ալ կը ջնջեն: Հեռզհեաէ թիւրք իշխանութիւններ կը հիմնուին Հայաստանի հիւսիսային կողմը, Քիւրտերը կը սկսին իջնալ հարաւային դաւաճները, Չինէն դաղթած Որբելեանք Վիրքի եւ Աբարատայ հիւսիսային կողմերը ահազին դաւաճներու տէր կ'ըլլան: ԺԳ դարուն կը սկսի Մանկուաց արշաւանքը որ Հայաստանն ալ կը լսփէ:

ԺԵ դարու վերջի կիսուն թիւրքմէններու արշաւանքը ծայր կուտայ եւ 1555ին Հայն ու Հայաստանը Օսմանցիներու ճանկին մէջ կ'իջնան:

ԺԶ դարուն Պարսիկները կը յաջողին Հայաստանի մէկ մասը խլել Օսմանցիներէն. վրացի թագաւորներ իրենց իշխանութիւնը կը տարածեն Հայաստանի հիւսիսային դաւաճներուն վրայ, ու ահա Ռուսը կը ծնի Մարմատիոյ երկիրներէն եւ կամաց կամաց կը դրուէ Պարսիկներէն ու Օսմանցիներէն այսօրուան ամբողջ Անդրկովկաս ըսուած երկիրը:

1827էն ի վեր քրիստոնեայ Ռուսը անընդհատ հաւաքուցիչն ու այդ թուականէն ի վեր կրկին հասանք մըն է որ տեղի կ'ունենայ, Հայերը յաղթականին երկիրը կը մտնեն, մահմետականները պարտեալին հոգերը կը զաղթեն:

Ահա Հայ պատմութեան կմախքը, իր ծագումէն մինչեւ այսօր, զոր աչքի առջեւ ունենալու է դազափար մը կարենալ կազմելու համար Հայերու ցեղագրութեան վերայ: Ինչ կը տեսնենք: Ծատ հին ազգ մը որ թերեւս 40 դար առաջ եկած հաստատուած է Վանայ լճին քովերը եւ անկից ճիւղեր արձակած է տեղացի ժողովուրդներուն մէջ, ինչ որ նպաստաւոր պայման մը եղած է իր անհատականութիւնը կորսնցնելու, ու անկից ի վեր նիւթապէս ու բարյապէս հեռզհեաէ ազդեցութիւնը կրած է Ասորեստանցոց, Քիւրտերուն, Վրացիներուն, Հրեաներուն, Պարթեներու, Հոսայեցիներու, Յայներու, Արաբներու, Մանկուներու, Լատիններու եւ վերջապէս Օսմանցիներու, Պարսիկներու եւ Ռուսերու. այս վերջինը թեւ նոր սկսած է, բայց կ'երեւայ ինչ ամէնէն ազդեցիկը պիտի ըլլայ: Հասարակաց ճամբայ մը եղած է այդ խեղճ երկիրը, որուն բնակիչները ամէն անցնողի խօսք հասկցուցած, ամէն անցնողէն բան մը վար դրած են: Ալ կրնայ հասկցուիլ թէ որքան դոււար է ասանկ ազգի մը գիտական ու ճշգրիտ ցեղագրութիւնը տալ: Ինչ որ զբոսանալի է սակայն, այդքան մեծ փոփոխութիւններ վերջ, այնքան ահազին տառապանքներէ յետոյ, այսօր կանգուն մնացած է ժողովուրդ մը, որ ուրոյն ցեղի մը ամէն յատկութիւնները կը ներկայացնէ, ինչպէս պիտի տեսնենք: Յեղ մը որ կարելի չէ իր դրացիներէն մէկուն հետ խօսնել: 40 դարու զուտ մը որ այսօր գիտականօրէն կը տիրէ այդ ահազին երկրին մէջ: Ամէն ուժերու խանութիւն յառաջածաղ մը կը դոյնայ. կրնանք բնի արդեօք որ այս օրուան Հայն ալ այնքան երկար ժամանակէ ի վեր այդ երկրին վրայէն անցած ուժերուն յառաջածաղն է:

2. Թուահամար. — Հայերը 20 դարէ ի վեր անընդհատ կը դաղթեն աշխարհի ամէն կողմ, այնպէս որ խիստ դոււար է իրենց ճիշդ թիւը գիտնալ: Մերձաւոր կերպով կրնայ ըսուիլ թէ այդ թիւը կը աստանի 4 ու կէս և 5 միլիոնի մէջ:

Մակար Չմշկեանի ԳՅԻ ժողովրդական տարեցոյցին մէջ կը գտնենք հետեւեալ բաժանումը.

|                         |           |
|-------------------------|-----------|
| Թուրահայաստան           | 1,763,000 |
| Եւրոպ. Թուրքիա          | 287,000   |
| Միջագետք                | 12,000    |
| Կիլիկիա                 | 244,000   |
| Եզրպոսոս                | 9,200     |
| Փոքր-Ասիա               | 689,000   |
| Եւրոպ. Ռուսիա եւ Սիպիւր | 185,000   |
| Անդրկովկասեան           | 1,380,000 |
| Պարսկաստան              | 174,000   |
| Հնդկաստան եւն.          | 48,000    |
| Ռուսմանիա եւ Պուլկարիա  | 14,300    |
| Հունգարիա եւ Եւրոպա     | 13,900    |
| Ամերիկա                 | 12,750    |
| Չինացեան երկիրներ       | 9,200     |
|                         | 4,843,350 |

Դիտելու արժանի է նաեւ որ Հայերուն մէջ, իրենց զբարացի Քիւրաբերուն եւ Թուրքերուն պէս, էրիկմարդոց թիւը միշտ կ'նիկմարդոց թիւէն բարձր է: Ընտանիքներու բազմանդամ ըլլալը ամէնէն սովորական բանն է: Շուշիի վիճակին մէջ 99,462 հոգի կը կազմեն միմիայն 16,936 ընտանիք (օճախ), 57,036ը էրիկմարդ, 44,024ը կին. Ելիսափէթիով՝ 8,914 հոգի, 2,033 ընտանիք, 4,337ը էրիկմարդ, 4,077ը կին. Կիրուսի՝ 3,142 հոգի, 459 ընտանիք, 1625ը էրիկմարդ, 1,447ը կին: Միջին հաշուով 3 ու կէս հոգի կ'իյնայ իւրաքանչիւր ընտանիքի եւ 1,000 էրիկմարդ 730 կնիկմարդու վրայ:

Դ. Ն կ ա բ ա զ ի ր, բ ա ռ ք եւ ո զ ի հ ա յ ժ ո զ ո Վ ը զ ի ն. — Հայերը այսօր այնքան ցրուած, ամէն ժողովրդի հետ այնքան խմորուած են որ անկարելի է ընդհանուր նշկարազիր մը տալ ամենուն համար: Բուն տիպարը պէտք է փնտռենք Հայաստանի ամէնէն խորին դաւաճներուն մէջ, ոնկից զուրս զուտ տիպարը կը պակսի, ինչպէս շատ իրաւամբ կ'ըսէ Պ. Շանդր. « Հնդկաստանի Հայը, Մեծիւթիւթիտանիոյ ազատ հպատակ, առեւտրով մեծ հարստութեան հասած. Ասորո—Հունդարիոյ Հայը, մեծ կաւուածատէր, աւատական իշխան, բարձր պաշտօնատար. Ռուսիոյ Հայը, զինուորական եւ քաղաքական ամէնէն բարձր աստիճաններուն հասած, չի կրնար բաղդատուիլ ինչ որ էր Հայը ժամանակաւ եւ ինչ որ է այսօր Թուրքիոյ բաւա Հայը: »

Դարերով բանակալութիւնը, յափշտակութիւնը, կոտորածները ընկերական անջնջելի հետքեր թողուցած են այդ խեղճ ժողովրդի ճակտին վրայ: Մ'ըր է այն հպարտ ու հզօր ցեղը, Տիգրանի, Արտաշէսի, Տրդատի բանակները կազմող ժողովուրդը, որ է այն խրոխտ նախարարներու սերունդը, որոնք մեղք որ իրար հասկնալ չէին դիտեր միայն. ամէն բան մարած է այսօր ու իբր տիրող նկարագիր համակերպութեան ոգին մնացած է, ամէն բանի մէջ, ամէն պարագայի տակ: Եւ որովհետեւ տեսակը պահելու բնազդն է որ կը ծնի այդ ընկերական վիճակին մէջ, կը տեսնէք որ Հայն ալ առած է այն նկարագիրը որ ընկճեալ ժողովուրդներուն բաժինն է. այսինքն խաբէլ, շողագործել, ստակ ժողովել: Բայց ինչ որ ալ ըլլայ այսօր ամէն մարդ կ'ընդունի որ « Հայը արեւելքի ցեղերուն ամէնէն մտացին, ամէնէն աշխատասէրը, ամէնէն ինայասէրը ու ամէնէն կրթեալն է: » Յայտնի կ'երեւայ որ այդ յատկութիւնները մեր տոհմային ուժերն են. ինչ որ ունինք ազատա, վերջէն եկած ըլլալու է մեզի, ժանգն է ան որուն տակ կը փայլի միշտ աղւոր մետաղը: Այդ ժանգն է նաեւ որ մեզի մակդիր մըն ալ տուած է, արեւելքի հրեաները: Արդար է նկատել ռակայն որ այդ նկարագիրը կը պատկանի փոքր դասակարգի մը միայն, ընդհանուր ժողովուրդը շատ հեռու է Հրեայի նմանելէ, այդ ժողովուրդը որ խաշնարած, երկրագործ, արհեստաւոր է, երկրին մէջ կը պահէ միշտ ազգայնութեան ոգին:

Հայ Հրեաներու հանդիպելու համար պէտք է մտնել վաճառաշահ քաղաքները ուր « շնորհիւ իրեն կծծիութեան որ երբեք յետին աստիճանի է, կ'ըսէ Պ. Շանդր, յաճախ

ահագին հարստութիւն կը զիգեն Հայերը: Միակ նպատակ մը ունին, ստակ: Հայկայ սերունդը շատ կանուխէն հասկցած է որ ստակը այն մեծ ուժն է որ պիտի տիրէ նոր սերունդներուն վրայ: Հայուն ամէնէն մեծ ջանքը տնոր հասնիլն է, որուն հետամուտ կ'ըլլայ շատ ատեն տունաց ո եւ է խղճահարութեան: Ասոր համար է որ, ուր որ Հայերը բազմութիւ են հոն Հրեաները քիչ կը տեսնուին, ինչպէս Թիֆլիսի, Կեսարիոյ մէջ ուր հրեայ մէկ հատ չի կայ: Կեսարիոյ մէջ այնքան աչքի կը զարնէ իրողութիւնը որ ժողովրդական շատ մը մանրավէպներ շինուած են կիսարացիին առեւտուրի մէջ Հրեաներուն վրայ ունեցած դերազանցութիւնը ցուցնող: »

Կեսարիան թողելէս ի վեր այդ մանրավէպներէն մին տակաւին միտքս մնացած է: Առտու մը սղուն մէկը քաղքին պարիսպներէն զուրս խաղցած ատեն ալամանդի կը տար մը կը դանէ: Այդ միջոցին հրեայ մը քաղաք կը հասնի, սղուն ձեռքի ալամանդը տեսնելով Առտուն կանուխ օրականին շահեցանք, կը մտածէ, ու ծիծաղկոտ երեսով մը.

— Տղաս, կ'ըսէ, քեզի խոշոր փարա մը տամ՝ ձեռքիդ ինձի սուր:

— Ես փարան ինչ պիտի ընեմ, ել սա քարին վրայ, ինձի ինդոցնելու համար անգամ մը իշու պէս զոա, քեզի սամ:

Հրեան սղուն առաջարկը վայրկեանին կը կատարէ:

— Էյ, կ'ըսէ սղան, դուն էշ ըլլալովդ երբ այս քարին յարդը զիտես, ես մարդ ըլլալովս ինչպէս կ'ուզես որ չզիսնամ:

Հրեան այս լուծին պէս ալ քաղաք ալ չի մտնել, մըտածելով որ եթէ սղոքը ասանկ ըլլան, ասոնց հայրերը ինչ ըլլալու են:

Կարեւոր կեցրոններու մէջ ուրիշ իրողութիւն մըն ալ աչքի կը զարնէ. Հայերը իրենց աշխատութեամբ, յարատեւութեամբ, մտացիութեամբ, արհեստի եւ գիտութեանց համար ունեցած սիրով, եւ վերին աստիճանի ճկունութեամբ, ոչ թէ ընկճուած են տիրող ցեղին տակ, ոչ թէ կորսուած են աշխարհակալող ազգին տարածած ոտայնութիւն մէջ, այլ ըլլալով Թիւրքիա, ըլլալով Ռուսիա, կրցած են ահագին ազդեցութիւն ունենալ սնանսական, վարչական սեսակէտով, այնպէս որ այդ ընկճեալ ազգը Թիւրքիոյ մէջ ամիրաներ, նախարարներ, Ռուսիոյ մէջ զօրապետներ, փոխարքաներ հասուցած է, իր աւելի համեստ խաւերէն ուսուցիչներ, նկարիչներ, արհեստաւորներ տուած է. վերջապէս ուրիշներ հրապարակի դարձերու մէջ այնքան յաջողութիւն ունեցած են որ այսօր ձարերու կայսրութիւնը ահագին մտմուրքի մէջ է Կովկասի հայ ազգայնութեան հսկայի քայլերը տեսնելով: Հայկական ոգին է աս որ ո եւ է մեկնութեան պէտք չունի:

Երրոպացիք սա սխալ կարծիքն ալ ունին Հայոց վրայ թէ զիրենք ապրեցնող երկրին կապուած կը մնան միշտ ու մայր հայրենիքին դաղափարը չունին: « Չի կայ զգացում մը, կ'ըսէ Պ. Շանդր, որ Հայերուն սիրտը այնքան խորէն թրթռացնէ որքան հայրենիքի յիշատակը. ընդհակառակը աւելի այդ դրացուին շափազանցութիւնն է որ մե-

զայրելու է:» Ու արդարեւ Պոլոսյ խաներուն անկիւնները  
իրիկունները, կիրակի օրերը ամոռին վրայ նստած ձեռքը  
երեսին դրած իր օճախին վրայ խորհող գաւառացիին հետ  
խօսող մէկը կրնայ զազափար մը ունենալ այս մասին:  
Կարելի՞ բան է այդ տեսակ կարծիք մը ունենալ այս ժո-  
ղովորդին վրայ, որ իր ամէնէն սիրելի երգը ըրած է.

Կուսնի, ո՛ւտի կուգաս, ծառայ եմ՝ ձայնիդ.

Կուսնի, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս:

Եթէ Հայերու նկարագիրը քննենք ուրիշ տեսակետով  
մը կը տեսնենք որ առեւտրական գործունէութեանց մէջ  
չարամանկ են: Այս եւ ասոր նման յատկութիւններն են  
որ թիւրքիոյ մէջ Հայերը շատ կը գործածուին տուրքերու  
եւ տասանորդներու զանձման համար: Կեսարիոյ մէջ ա-  
ռիթ ունեցած եմ տեսնել ատոնցմէ շատեր. ամէն ունեւոր  
թիւրք որ գաւառի մը տասանորդը կ'տոնէ, իրեն հետ ու-  
նի մէկ երկու հայ, որոնք մէկ նկատուած միայն ունին,  
կարելի եղածին չափ շատ հասցիք հանել: Պարկիշտու-  
թիւնը ընչաքաղցութեան տեղի տուած է այդ մարդոց  
ընդ, որոնք հաւատարապէս կը կեղեքեն հայն ու թուրքը:

«Սակայն որքան որ կցիր՝ կեանքի հասարակ պա-  
րագաներուն մէջ, առանց վարանելու, առանց աղմուկի,  
Հայը անխնայ կուտայ իր դրամը հաստատելու եւ պահե-  
լու համար հանրային օգուտ ունեցող հիմնարկութիւնները:  
Շատ վարժարաններ, հիւանդանոցներ, եկեղեցիներ, հայ-  
րենասիրական ընկերութիւններ հաստատուած են ու կը  
հաստատուին կամաւոր տուրքերով:» Այս մասին Ագու-  
լիս, Անդրկովկասի այդ շէն քաղաքը, լաւ օրինակ մը կու-  
տայ. ժողովուրդ մը այնքան ազահ, այնքան հարստա-  
նալաւ ծարաւի, ժողովուրդ մը որ տարիներով երկրէն  
դուրս, աշխարհի ամէն կողմը, զրամի ետեւէ կը վազէ,  
զիտցած է ունենալ փառուն վարժարաններ, հարուստ ե-  
կեղեցի, եւ կազմել լուսամիտ ու կրթեալ քաղաքա-  
ցիներ:

Հայերուն բնատրութիւնը քննելով Պ. Շանդր կ'ըսէ.  
«Իրենց հայրենի գաւառներուն մէջ Հայերը նահասկե-  
կան կեանքով ապրող ժողովուրդ մըն են, հիւրասեր են և  
զթած: Բնատրութեամբ ընդհանրապէս տխուր են, ո՛չ  
Յոյներու բաղախնդիր ոգին ունին, ոչ ալ այն համար-  
ձակութիւնը որ զիրենք պատերազմի վտանգներուն մղէ,  
ոչ վառ երեւակայութիւն ունին ոչ ալ զեղարուեստական  
զղացում:» Բայց, կը փութայ աւելցնել անուանի հնա-  
դէտը, այս յատկութիւններէն զրկուած ըլլալէ շատ հեռու  
են Հայերը. «Նոր ժամանակներու մէջ անոնք տուած են  
իրենց բաժինը թէ՛ զինուորութեան, թէ՛ զիտութեանց և  
թէ՛ զեղարուեստից մէջ:»

Կարելի չէ մոռնալ սակայն արհասանքու համար  
Հայուն ունեցած յարմարութիւնը, զանոնք կատարելու-  
թեան հասցնելու կարողութիւնը: Ոսկերչութեան, զինա-  
գործութեան, եւ տարազագործութեան մէջ կատարեալ  
վարպետներ են: «Այն աղւոր կերպաները որոնք կը  
ծախուին թիւրքիոյ շուկաներուն մէջ, որոնց վրայ ոսկին,  
արծաթը ու մետաղը տեսնողին աչքը շտապելու սասի-

ճան վարպետութեամբ իրարու խանուած են, Հայերու  
ձեռքէն կ'ելլեն: Անոնք են որ կը բանին մետաքսեայ այն  
զեղանշոյլ երանգով աղւոր գորշերը որոնք հասկցողին  
խելքը կը տանին:»

Ուրիշ կէտի մը վրայ ալ Պ. Շանդր կ'ուզէ մեր մա-  
սին տարածուած այն կարծիքը թէ անկարող ենք մենք  
մեզի պաշտպանելու: «Թող աւան իրենց զէնքերը, իրենց  
իրաւունքները, կ'ըսէ Պ. Շանդր, եւ պիտի տեսնեն որ  
ի՛նչպէս զիտեն զանոնք գործածել: Չէ մոռցուած տակա-  
ւին խոզանի անկախութեան կոխը, թուրքահայ շինա-  
կաններու ազատութեան այդ վերջին սպաւէտը: Չէ մա-  
ցուած Չէյթունցիներու, Հաճընցիներու քաջութիւնը ո-  
րոնք կրցան պաշտպանել կիլիկեան Տարսուս վայրի կիր-  
ճերը, իրենց յաղթականներն իսկ հիացնելու տոտիճան  
քաջութեամբ կուռելով:»

Պ. Շանդր մատնանիշ կ'ընէ նոյնպէս Հայուն կրթուե-  
լու անհուն տենչը, նոյն իսկ ամենայնեւն զիւղերուն մէջ,  
եւ իրաւ ալ թիւրքիոյ մէջ կրթական ճշմարիտ գործ մը ու  
զբաւանութիւն ունեցող միակ ցեղը մենք ըլլալին այն-  
քան ծանօթ է որ ալ աւելի շեմ ծանրանար այս կէտին  
վրայ:

Զ. Կրօնք. — Հայերուն նախնական կրօնքը, բու-  
լար միտ ժողովուրդներուն կրօնքին պէս, ահալին մի՞թաւ  
թեամբ պաշարուած զիցարանութեան մը վրայ հիմնուած  
է: Մեր ոչ մէկ հեղինակը, կ'ըսէ Էմին, փորձած է հաս-  
կնալ մեր նախնեաց կրօնքին ի՛նչ ըլլալը, ոչ որ հոյ տա-  
րած է փնտռել թէ մեր երկրին մէջ աստուածները ի՛նչ  
կարող իրարու յաջորդած են, ի՛նչ յարնչութիւն ունին  
անոնք արեւմտեան ժողովուրդներուն աստուածներուն  
հետ: Ինչ որ ուղած են զիտնալ ան է թէ մեր աստ-  
ուածները Յոյներու աստուածներէն փոխ աւանուած են,  
մինչդեռ Էմին կրցաւ հաստատել որ հայկական հին կր-  
օնքէն թեոքած քանի մը հազուադիտ կտորները պաշ-  
տուած են այնպիսի ժամանակ մը, երբ Հայերս ու եւ  
յարաբերութիւն չունէինք Յունաց հետ: Այս կամաւոր  
սոյիտութեան պատճառը շատ զիբաւ կը հասկցուի. նոր  
ժամանակներու մէջ մեր պատմագիրները, հնագէտները  
Միսթարեանները եղած են. Ինճիճեան եւ Բազրասունի  
հայերը աշխատած են մէկ բան մը միայն հաստատել,  
այն թէ Հայերը եղած են միաստուածեան, եւ թիշ մըն  
ալ յառաջ երթալով, ուղած են հաւատացնել որ Հայերը  
զիտցած են պաշտել ճշմարիտ Աստուածը: Չէ որ Հայկը,  
Նոյայ թոռան թոռը, իր պապերուն կրօնքը Հայաստան  
բերաւ, և կամ Նոյ երբ տապանէն ելլելով Մասիսէն վոր  
իջաւ, որթիւնուն հետ ճշմարիտ Աստուծոյ կրօնքն սը  
անկեց Արարատ գաւառը:

Բնական է որ այս զազափարը ու եւ է հիմ չունի. ո՛չ  
տեղական անագութիւն կայ, ո՛չ ալ պատմական ծանօ-  
թութիւն զայն հաստատող: Այդ բարի հայրերուն միա-  
միտ բարեպաշտութեան ու իրենց նախնիքներուն ունե-  
ցած մեծ յարգանքին արդիւնքն է ատիկա և ոչ ուրիշ բան:

Էմին մը պէտք էր որ պատմագրի ճշմարիտ հայ-  
եացը լը զիտելով քննէր բոլոր հնութիւնները, Հայոց

նախկին կրօնքին վրայ շիտակ գաղափար մը կազմելու համար: Ժողովրդական ասանկութիւնները ու հայ լեզուի ծնագումը թող աստիճանի հաստատել որ Հայկոյ սերունդը կապուած է մէկ կողմէն բարեկրօնական, միւս կողմէն գանդիկ լեզու խօսող ցեղերու, ուստի էմին ուղղակի կըրցաւ հետեւցնել որ Հայոց նախկին պաշտամունքը առնուած է այդ ցեղերուն մէջէն: Էմին կըրցու հաստատել նաեւ որ բնիկ եւ ազգային կրօնքէն զատ Հայերը ո՛նեւ պաշտակական ծագումէ՛ կըրցան թիչ տաննէն ահալին տեղ գրաւել հայ պաշտամունքին մէջ, այնպէս որ բուն աւհմային կրօնքը սկսու շատ վերջը գալ: Հայոց այդ նախկին կրօնքը երկու սկզբունքի վրայ հիմնուած էր. մին Արամազդը, զերագոյն աստուածը, երկրի եւ երկնի արարիչը, որ կ'արատաղէր պարարտութիւնը, արդասարբերութիւնը. միւսը Ահրիմանը, շարին սկզբունքը: Այս երկու մեծ աստուածութիւններուն ըով Հայերը կը պաշտէին նաեւ սրիշներ: Յիշենք Անահիտը, Արամազդի աղջիկը, երկրի թագուհին, աստուածներու մայրը: Ասորական արձանագրութիւն մը կը ցուցնէ թէ Անահիտը կը պաշտուէր նաեւ Բաբելոն, Փիւնիկէ եւ Յունաստան, բայց ոչ մէկ տեղ այնքան յարգուած է ան որքան Հայաստան, ուր իր անուան բարձրացած տաճարները խիստ բազմութիւն էին: Յոյն եւ լատին հեղինակներ կը յիշատակեն այդ տաճարներուն ճոխութիւնը, սրոնց ամէնէն կարեւորները կը գանուէին Երզրայի մէջ, Եփրատի աջ ափունքին վրայ: Այս տաճարներուն մէջ, կ'ըսեն այդ հեղինակները, բացի ջուրմերէ եւ ջրմուհիներէ կը գտնուէին լաւագոյն ընտանիքի վերաբերեալ աղջիկներ սրոնք այդ տաճարներուն պահապաններն էին, եւ հոն երկար տարիներ իրենց զիրենք պոսնկութեան տալէ վերջ միայն կրնային ամուսնանալ:

Ազգային պատմագիրը, Ալաթանգեղոս, բարբառովին տարբեր ձեւի մը տակ կը ներկայացնէ ոսկայն Անահիտը: Անահիտ բառը պարսկերէն ան ա հ ա տ ա բառէն կուգայ որ ամբիժ ըսել է: Ըստ էմինի ալ բարբառովին անիրաւ են յոյն ու լատին այն հեղինակները, սրոնք կը կարծէին թէ Սիրիոյ եւ Միջագետքի մէջ տեսնուած Անահիտի պաշտամունքին ձեւը Հայաստանէն եկած է: Չի կայ մէկ հայ հեղինակ որ այս պաշտամունքը ներկայացնէ այն ձեւին տակ ինչպէս կը տեսնուէր Բաբելոն, Փիւնիկէ եւ Փոսթոլիա, որ կին եւ Լրիկմարզ ծայրայեղ ցնորքի մէջ ինկած ի ձայն թմբկի եւ սրինգի ամէնէն պիղծ խաղերու ու ամէնէն հրէշային շուայտութիւններու մէջ կ'իյնային: Եթէ հեթանոս Հայերը ունենային այդպիսի սովորութիւններ, ջրիտոնեայ հեղինակները մեծ փութով պիտի յիշատակէին իրենց նորագաւանները կարելի եղածին չափ զգուցնելու համար սուտ աստուածներու պաշտամունքէն: Անահիտ մեր մէջ պարկեշտութեան մօր մը ամէն հանգամանքներովը կը ներկայանայ: Բայց այս կարծիքը բոլորէն ընկունուածը չէ այսօր. եւ Գոհօցէր կը պնդէ որ Հայոց Անահիտը նախատիպարն է բոլոր նմանօրինակ աստուածներու սրոնց պաշտամունքը Արեւմտեան Ասիոյ սէջ տարածուած

էր: Հայաստան եղած է այդ պաշտամունքի ձեւին օրրանը:

Կարեւոր աստուած մըն էր նաեւ Միհրը (Ահր) որ Պարսկերէն փոխ անուած է: Միհր ունէր երկու յայտնութիւն, Արեգակն (Արեգի աչքը) եւ Լուսին. մին արու, միւսը էգ սեռը կը ներկայացնէր: Ասոնց տաճարը կը գտնուէր Արմաւիրի մէջ Երասխայ մօտ: Այսօր այդ նշանաւոր տաճարներէն, Արեւուրդիներու համբաւաւոր բերդէն կը մնայ միայն կիկլոպեան պարիսպներու անձեւ կոյտ մը ուր եկեղեցի մըն ալ կը տեսնուի: Ուրիշ տաճար մը կը գտնուէր Պոյ Աւանի մէջ (այսօրուան Բաղուն): Մինչեւ այսօր Արեգակն եւ Լուսնի պատկերներ կը տեսնուին քանի մը հին հարթքանդակներու վրայ, ինչպէս Ազուլխի Ս. Թոմաս վանքին եկեղեցւոյն դրան վրայինը: «Արգէն հաւանական է որ այդ տեսակ տաճար մըն ալ հոն գտնուած ըլլայ, որովհետեւ, կ'ըսէ Պ. Շանգը, վանքին մէջէն հին մասին մէջ մեզի ցոյց տուին սլաւիկ սրահ մը որ հայկական հին տաճար մը կը նկատուի:» Այս պատկերներէն կը տեսնուին նաեւ գերեզմաններու հիւթուներուն վրայ:

Ամանոր, երկրի պոսնկներուն աստուածը, որ վահաստուր դիք ալ կը կոչուէր, պաշտօն ունէր ապաստան տալ հաւատացեալներու. հիւրասիրութեան դիքն էր այն: Իր տաճարը կը գտնուէր Արարատայ նահանգը Բաղրեանդի գաւառը Բաղաւանի մէջ: Օշոտտոս Վին մեծ հանգէտով հոն կուգային Հայաստանի ամէն կողմէն, ուխտաւորները ընծաներ կը բերէին, մատաղ կ'ընէին եւ տաճարին մէջ կը բնակէին, վեց օր, վեց գիշեր կ'ուտէին կը խմէին հոն: Այս հին սովորութիւնը մինչեւ այսօր մեր մեծ վանքերու մէջ թիչ շատ մնացած է. նշանաւոր են այս մասին Գեղարզայ վանքը եւ երկու սուրբ կարապետները: Գեղարզ՝ Այրի վանք ալ կը կոչուի որովհետեւ մասամբ մայրի մը մէջ փորուած է. այս ձեւ շէնքեր կ'երեւայ թէ Հայաստանի մէջ հազուադիւր չեն: Առիթ ունեցայ միայն կեսարիոյ մէջ քանի մը հատ տեսնել. Տէրէ վանքը ձորի մը կողմ ամբողջ մայրի մը մէջ փորուած է. Ս. կարապետը ունի ստորերկրեայ ամբողջ վանք մը որուն վրայ այսօրուան շէնքը բարձրացած է. գետնին տակ կը տեսնուին շատ յայտնի կերպով եկեղեցիներ, անել խցիկները, շտեմարանները կային: Երկու գլխաւոր մասէ կը բաղկանայ որոնք 200 բոյլ երկայն նեղ արահետով կը միանան իրարու. արահետ ըսածս 1 մ. 20 բարձր եւ 0, մ. 70 լայն անցք մըն է քարի մէջ փորուած: Այդ ընդերկրեայ շէնքը հազիւ չորս պզտիկ լուսանցքներ ունի որոնք կը նային այս օրուան վանքին առջեւ գտնուած ձորին վրայ: Վանքին մուտքը դուրսէն կարելու համար այդ նեղ արահետին մէջ մայրի կտորէ շինած են 40 սանթիմետր հաստ եւ մէկ ու կէս մետր տրամագիծով աղօթքի քարեր. դիւրին է հասկնալ որ այդ քարին ծնունդ տուող տեղը պզտիկ խցիկ մը կազմած է. երբ այդ խցիկը մտնելով քարը հրեն, արահետը կը զոցուի եւ ա'լ անկարելի կ'ըլլայ ներս մտնել. զուրսէն եկող մը կը գտնուի միակտոր քարէ պատի մը դիմաց, ալ կողմը քար, ձախ

կողմը բար, առջին բար, ետեւը միայն եկած ճամբան կը տեսնէ:

Հայերը բրիտանոսեայ ըլլալէ վերջ իրենց հին աւան- գութիւնները չեն մոռցած: Հրոյ պաշտամունքը որքան ալ մարած ըլլայ մինչեւ այսօր կը տեսնուի Հայերուն բով- Ամանորին նոր հարս ու փեսայ պղնձէ ամանի մը մէջ կը վառեն ծաղիկներ, արմտիք, բարունակ եւ պտուղներ: Նշանածոները արեւուն կը նային զայն վկայ բռնելու հա- մար իրենց սիրոյն, հիւանդները իրենց առողջութիւնը անկից կը հայցեն, հոգեւորացիները կը յուսան անոր մա- տուցանել իրենց վերջին հայեացքը ի նշան երախտագի- տութեան, եւ մեռելները երեսնին անոր զարձուցած կը թաղուին: Մինչեւ այսօր Տեառնընդառաջի երեկոյն ա- հագին խարոյկներ կը կազմուին. փշալից խուրձեր կը զիզուին եկեղեցիներուն զաւիթը կամ զիւրիկն հրապարա- կը, զօգալի ճիւղերով կը զարդարեն զանոնք եւ ժամեր- գութիւնը լմացածին պէս կրակ կուտան: Աղջիկները, նոր հարսերը պար բռնած կը դառնան բոցին շուրջը. եւ երբ խարոյկը մարելու մօտ ըլլայ՝ պարը կը բախուի եւ կը սկսին բոցին վրայէն ցատքել:

Եթէ դիտելու ըլլանք կը տեսնենք որ Հայերը ամէնէն բանական կրօնքը ունեցած են. արեւը, կրակը, ծառերը պաշտած են: Եւ ի՞նչ կայ աւելի ողջապահի բան ծառե- րու ճիւղեր այրել օղբ մաքրելու համար, ի՞նչ կայ աւելի կենարար քան արեւուն ջերմութիւնը: Սակայն Հայերը այս բնական կրօնքով չեն մոռցած. հետզհետէ ներշնչուած են Քաղզէացոց սաբէականութենէն, Պարսից մոզու- թենէն եւ աւելի ուշ Յունաց հեթանոսութենէն: Այս կը- րօնքները իրարու խառնուելով իրարու յաջորդելով հա- սած են մինչեւ մեր թուականը եւ չորս դար Նազովրեցիին կրօնքին հետ շափուելէն վերջ բոլորովին անհետացած են հայ աշխարհէն, միայն քանի մը աւանդութիւններ ձգելով:

ԱՆՏԻՊԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Բ Ա Ղ Է Շ

Բաղէշի նահանգին կացութեան վրայ վրդովիչ տեղե- կութիւններ կը հասնին եւրոպական լրագիրներուն: Յե- ղափոխականներ գտնելու պատրուակին տակ, Ախլաթի գիւղերուն մէջ ահռելի խտութիւններ սկսած են, եւ Բիւր- տները զարկած կողպատած են ութ գիւղ: «Տէյլի թէլէկ- րաֆ» յի վիեննայի թղթակիցը կը հաղորդէ թէ վիեննայի պաշտօնական շրջանակներուն մէջ համոզուած են թէ Բիւրտները զրգոյ ոյժ մը կայ, նոր խոտութիւններ յա- բուցանելու հասար: Հարկ է ըսել թէ բոլոր կասկածները Ռուսիոյ մասին են:

Միւս կողմէ Բիւղէր կը տեղեկանայ թէ Բիւրտներուն

կատարած խժողութիւններուն շարժառիթը եղած է Ախլա- թի մէջ լաւ գինուած Հայերու խմբի մը երեւան ելած ըլ- լալուն լուրը: «Բիւրտները հաւաքուած եւ ութ հայ գիւղի վրայ յարձակած են, տուններուն մեծ մասը թալանի տալով եւ շատ մը Հայեր սպաննելով: Բիւրտներու խումբ մըն ալ մինչեւ Պուլանք հասած է, ուր խուզարկութիւնը շարու- նակած է եւ բուսական Հայեր սպաննած: Վաշա մը զօրք զրկուած է հայ խմբին ետեւէն. զօրքը մինչեւ սուրբ Աշ- պարէկ (.) հասած եւ զայն կողպատած է: Վանականե- րէն մէկ բանին գինուորականներու խաշտանգումներէն վախնալով փախած են եւ մին փախչելու պահուն գինուոր- ներէն բռնուած է: — Թէ՛ վանէն եւ թէ՛ Երզնկայէն Բիւր- տներու հարստահարութեանց լուրեր կան: Նիխարի մէջ խալամներուն սպանալիքները մեծ ոարսափ տարածած են: Երսուն բիւրա Երզնկայի Թալմիշէր-Քէլազ (.) գիւղին նախիրը, որ վանքին կը վերաբերէր, բշած տարած են, գիւղին տունները թալլած եւ գիւղացիներէն մէկ քանին նոյն խի իրենց գրգեստէն մերկացուցած են:»

Ահաւասիկ ի՞նչ կը գրեն մեզ Բաղէշէն այս նոր խոտ- վութեանց մասին.

«Յունիսի սկիզբները Ժանտարմայի միւլագիմ Զեր- քէզ Ալի պէյ հետ բաւական զօրք առած Ախլաթի գիւ- ղերը կ'երթայ եւ քննութեան կը սկսի: Խեղճ գիւղացիներ կանչելով, հրապարակաւ կը սկսի դանակով մեղցնելու աստիճան. «Շիտա՛կ ըսէք, բեաֆիրներ, ո՞ր տուն կամ ո՞ւր պահուած կան յեղափոխական Հայերը, որո՞նք են, ո՞վ հաց, կերակուր կը տանի իրենց, ե՞րբ եկած են, քանի՞ հոգի են, ի՞նչ է նպատակին»: Գիւղացիներուն տրուած շարշարանքները ահաւոր են, ոմանք ծեծի տակ մեռած են, ուրիշներ կազով այրուած, կիներն ալ հարցաքննութեան ենթարկուած են, անոնք ալ շարշարանքի մատնուած, ու գինուորներու կողմէ լլկուած:

«Ալի պէյի անցնելէն յետոյ Բիւրտները կը յարձակին, ու կը սկսին ամէն բարբարոսութիւն ի գործ դնել. անա- ղարտ կին ու կոյս չեն թողուր, եւ կ'առնեն կը սանին ինչ որ կարելի է:

«Ահա զոհերուն ցանկը.

| Գիւղ         | Սպանուած | Աւար տարուած եղ ու |
|--------------|----------|--------------------|
| 1. Սազ       | 10       | 252 ոչխար          |
| 2. Բըրխուս   | 2        | 160                |
| 3. Սօխուրդ   | 2        | աւերակ             |
| 4. Կարմունջ  | 2        | 150                |
| 5. Դատուան   | 2        |                    |
| 6. Դեղուտ    | 2        | 200                |
| 7. Մեծք      | 1        | 20                 |
| 8. Զորկանք   | 1        | Բէս Յարութիւն      |
| 9. Վանք      | 2        |                    |
| 10. Բաղէշ    | 1        |                    |
| 11. Զրխոր    |          | 24                 |
| 12. Դափափանք |          | 50                 |
| 13. Գիւշտին  |          | 24                 |
| 14. Մլղակ    |          | 200                |
| 15. Կծուկ    |          | 200                |
| 16. Ագրակ    |          | Ամբողջ             |
| 17. Երսանք   |          | »                  |

«Այսօր Բաղէշի մէջ 400 հօգի բանտերը լեցուած են: («Քոլիզիէ Գորկարոնտէնց») կ'իմանայ թէ Բաղէշի սասիկանութեան գոմիսեր Հայիմ պէյը սպաննած ըլլալու կասկածին տակ գտնուող մարդոց դատաստանին հետեանքով, բազմաթիւ Հայեր ձերբակալուած են Բաղէշ ու շրջակայքը: Ասանցիկ երսունը էրգրում տարուած են, ուր պիտի քննուին»)

«Անպիտոյ դեր—հիւսաասար վիրաբուժ բռնած՝ դարմանել կուտայ գանակոծուել, կոտուել, եւայն վիրատուում Հայերը:

«Բաղէշի մէջ բնականուր ջարդէն մինչեւ հիմա բնաւ հայ մը թուրքի մը հետ չի կրնար խօսիլ անփառ. եկեղեցիներուն գանդակները չենք կրնար հնչեցնել. ժամը 12էն ետքը փողոց ելլել կարելի չէ. նաեւ եթէ ժամը 2էն ետքը տան մը մէջ լոյս տեսնեն, պահակ գործերը ներս կը մտնեն հասկնալու թէ ինչու՞ ճրագ կը վառի: Արհեստ ու առուստուր գաղթած է: Եւկային մէջ Հայերը ամէն ժամ հայհոյութեանց ու խոշտանդումներու ենթակայ են:

«Կ'իմանամ թէ վերջերս Տաւրոսի լեռը խուզարկութիւններ կատարած են, բայց բան մը չեն գտած»:

Տ Ի Ա Ր Պ Է Ք Ի Ր

Տիարպէքիբէն կը գրեն մեղ յուլիս 18 թուականով.

վերջին օրերու կարեւորաբոյն իրողութիւնն է հոչակաւոր Համիտիկ հեծելազօրքին յաւելումը: Կ. Պօլսն եւ կած հրամաններուն վրայ, Համիտիկ գունդերուն թիւը 60էն 100ի պիտի բարձրացուի, եւ ամէն կողմ՝ փափաքողները կը հրաւիրուին համիտիկ գրուիլ «ի պաշտօնանութիւն օսմանեան հայրենիքին»:

վերան—Շէհիբի համբաւաւոր Խպրահիմ փաշան 15 օրէ ի վեր տեղս եկած է՝ շրջակայ Քիւրտները համիտիկ գրելու. այսպէս Գարաճատաղի, Մահալի, Մաթիւնանի եւ այլ աշայիրներէն հարիւրներով եկան դրուեցան արդէն. լճէ նստող միականի Մահամատ պէյը որ Ջըրբզ կոչուած ցեղին պետն է, տասը օր առաջ սուլթանին հեռագրեց 200 բառով եւ յայտնեց իր պատրաստականութիւնը: Ամէն անկիւններէ գունդագունդ տեղս կուգան վայրի ու վիթխարի Քիւրտներ, մենէ աւար տարած ոսկիները ծրարներով Խպրահիմ փաշայի ոտքը կը դնեն եւ հազարապետութեան, հարիւրապետութեան եւ այլ պաշտօններ կը ստանան: Ա՛լ չափ չունի այն գազաններուն ամբարտաւանութիւնը, որ ծիծաղելի պիտի ըլլար եթէ ահաւոր չըլլար թուրքերէն բա՛ն մը չեն գիտեր, բայց մեզի կը մոլտան ու սկրայ կը կրճտեն. «Ի՛ր պիտի ըլլայ որ կարմիր օշարակի պէս արիւննից խմենք, քեաֆիր Ֆըլլաներ (հայ):»

Այս զինուորական ամբողջ կատակերգութիւնը անդին շարքերգութեան պիտի փոխուի ի փաս խեղճ ժողովրդին: Տուժողները միայն մենք չենք, կարգը թիւրքերունն է հիմա: Ճէզիրէի գայմազամութեան մէջ բնակող Աղայէ Սօր անուն նշանաւոր պէյին եւ Համիտիկ փաշա Բաշալ Մսթոյի միջեւ կոխը կը շարունակուի: Չօրս—հինգ ամիս

առաջ երկուքն ալ տեղս եկան եւ կուսակալին յորդորմամբ հաշտուեցան եւ պաշտօնապէս ալ թուրք ստորագրեցին նօտարի առջեւ: Բայց երբ տեղերին դարձան, կոխը վերսկսաւ: Քաշալ Մսթօն Աղայէ Սօրին եղբայրը սպաննած էր. այս վերջինը յարձակելով թշնամի ցեղին վրայ քանի մը Համիտիկ սպաննեց եւ Մսթօ փաշային թող չտուած ձմերանոց երթալ Ջօզան: Մսթօ փաշան, կատաճ, ա՛լ Ճէզիրէի մէջ ամէն շարիք կը գործէ՝ բրիտանուէի եւ իսլամի անխտիր: Կարաւաններ կը թալլէ, հակերը շուկային մէջ բանալով՝ ուզածին պէս ժողովրդին կը ծախէ բռնի, բաղնեպանին ձեռքէն կ'առնէ բանալին եւ կանանց ժամուն բաղնիք մտնելով՝ շութիւններ կը գործէ մերկ կանանց հետ... Ճէզիրէի միւֆթիին մօրուքը ամիլի կուտայ եւ անոր սեփական մէկ պանդուկը կը հրկիզէ. Ճէզիրէի Մալ միտիրիին (Մահմէտի սերունդէն Տիարպէքիբի Շէյխ Ապա կանանչագգեստ խոճային տղան) կնոջը հետ կը շնայ թէ՛ սուլթանին եւ թէ՛ սուլթանին հարէմին հեռագրուած է՝ — Գլծացէ՛ք մեզի, Համիտիկները մեր պատիւը անխղճօրէն եւ աներկիւղ կը բռնաբարեն, — սակայն պատասխան չէ եկած: Այս պատճառաւ Ճէզիրէն թուրքեր ու բրիտանուներ զիջերանց ընտանիքով կը փախչին եւ տեղս կուչան:

Նոյնպէս, Սեւերեկի Օսման աղային եւ Համիտիկ Խպրահիմ փաշային միջև խոսովութիւնը զեռ կը շարունակուի: Քանի մը ամիս առաջ Օսման աղան Պօլիս գացած էր սուլթանին, եւ կ'ըսուի թէ Համիտիկ գրուելով՝ Երզնկա անցած է: Երզնկայի Գ. զօրաբանակի Միւշիբ Չէքի փաշա հինգ օր առաջ հեռագրով տեղէս կանչեց Խպրահիմ փաշան, որ երեք օրուան հրաման առնելով վերան—Շէհիբ գնաց եւ անկից Երզնկա պիտի երթայ գատուելու:

Խպրահիմ փաշային ձեռքէն տակ եղած հայ սպասաւորներէն հինգը Համիտիկ գրուած են եւ նշան կապած ճակատնուն:

Այս օրերս, Տիարպէքիբի թուրքերն ալ կը փափաքին Համիտիկ գրուիլ, ոմանք ահամայ, վասն զի քիւրա Համիտիկները իրենց ոչխարները կը տանին — Հայոցը վերջացնել յետոյ —, արտերնին կ'աւերեն եւայն, իրենց բողոքները անյսելի կը մնան, վասն զի բաղաբային իշխանութիւնը չի միջամտեր Համիտիկներու արարքներուն: Ուրիշներ ալ յատկապէս կը գրուին՝ առոր անոր անարգել փաստելով ապրելու համար:

Քաղաքիս հարուստ իսլամներէն Մուհարամգատա Պէքիբ Էֆէնտի — որ ամիս մը առաջ տիրած սղութեան միջոցին 10,000 լիբայէն աւելի ցորեն զրկեց Մուսուլ եւ զեռ կրկնապատիկը ունի պահեստի — իր տասնամեայ որդին Համիտիկ գրել սուաւ եւ շաաեր հետեւած են իր օրինակին: Երիծաղելի է տեսնել 7—10 տարեկան քիւրա ու թուրք լակոտներ՝ հազարապետի, միլիազիմի ու գայմապամի համազգեստով, սուրը մէջքին, պատուանշանը կուրծքին եւ սուլթանի կնիքը ճակատնուն փողոցները կը շրջին:

Այդ Պէքիբ պէյը, որ Տիարպէքիբի ջարդին գլխաւոր կազմակերպիչներէն մին եղած էր, վերջերս քանի մը

Թուրք զողեր իր ասն մէջ բանտարկած էր՝ անօթի ծա-  
քա գիշեր ցերեկ պանակածելով զերեսը, վասն զի՝ գար-  
նան՝ բեռնը գտնուած ժամանակ՝ բանի մը կտոր գոյք  
պոզուեր են իր վրանէն։ Կառավարութիւնը ղեկըը իմա-  
նալուն ձերբակալեց ու բանտարկեց Պէքիր պէյը։ Իր ոճ-  
բին պատիժն է 4 ամիսն մինչեւ 9 ամիս բանտարկութիւն։  
Մակայն չնորհիւ իր ոսկիներուն որ կուսակալին՝ ու իւր-  
րահիմ՝ փաշային գոյր լեցուց, շարս օրէն ազատ արձակ-  
ուեցաւ եւ հիմա ճակատարաց կը շրջի։

Քաղցիւն Թուրքերուն մէջ այս օրերս բաւական յու-  
զում կը տիրէ՝ հանրային կրթութեան անօրէնին — այդ  
պաշտօնը իսպառ ջնջուեցաւ — եւ ուրիշ հինգ երիտա-  
սարդ Թուրքերու ձերբակալմանը պատճառաւ, որոնց  
յանցանքն էր սուլթանին հեռագիրը մը զրկած ըլլալ, կու-  
սակալ խալիս պէյի զեղծումներուն գէմ բողոքող։ Խալիս  
պէյ վեցը մէկէն բանաւ նեւեց։

**Ճ Ա Մ Ա Ն Յ**

**ՆԱՄԱԿ ԲՈՒՆԵՎԱՄԻ ՄԸ**

15 օգոստոս 98

Սիրելի բարեկամ,

Հարցարան-նամակ պատգայ։ Քեզի հետաքրքրող  
կարգ մը խնդիրներու մասին, տեղեկութեան հետ կար-  
ծիքներս ալ իմանալ կ'օգես։ Կը փափաքիս սակայն որ  
անունիս հաւատարիմ՝ իբր սկեպտիկ մը գրեմ, «ինչ  
պիտի ըսն»ը մտքէն չանցընելով։ Իրաւունք ունիս երբ  
կ'ըսես թէ «հասարակաց կարծիքին» վախը գրողին մըտ-  
քին այնպէս աղիտարբեր է ինչպէս սեզմիրանը կ'ընչ կուրծ-  
քին. մէկը՝ մարմինը կը ծոռոկէ, միւրը՝ ըղեղը։ Ամէն  
կաշկանդուն՝ հիւանդութիւն ուստի և տղեղութիւն կը ծնի։  
Առողջութիւնը եւ Գեղեցկութիւնը ազատութեան զաւակ  
են։ Աս «Հաւատամք»ից ճշմարտութիւնը շատոնց է գա-  
ւանած եմ, որեւեմ կրնաս անվախ ըլլալ թէ առանց «չարս  
կողմս նայելու» պատասխաններս պիտի տամ։

Առաջին հարցումդ Օրմանեան պատրիարքին կը վե-  
րաբերիս կ'ուզես գիտնալ թէ ինչն է վարանոտ ենք հան-  
պէս առ եկեղեցական պաշտօնէին. «ինչո՞ւ ո՞չ սրողապէս  
կը դրուատեք և ո՞չ ալ կը պարսաւեք անիկա» կ'ըսես, մե-  
ղադրանքի շեշտով մը։ Շիտակը ես ալ չիյտեմ «ինչո՞ւ»։  
Գիտես թէ բնագոյն է որ շատ անգամ կը վարէ ժողովուրդ-  
ները. առ մեծ պատգամասուն ալ զեռ վարանկոտ է Օր-  
մանեանի նկատմամբ ազգին որոշ թելադրութիւն մը ը-  
նելու։

Կնձոտ խնդիրներ սակայն երբեմն կը շուծուին ա-  
ռակներով որոնք պատկերի մը մէջ առժամայ ճշարտու-

թիւն մը կ'ամփոփեն։ Թէեւ արամաբանութիւնը շատ ան-  
գամ պիտի կրնար այդ ճշմարտութիւնները հերքել, բայց  
ամէն տոնն խօսքը արամաբանութեան չի հատնիր, բարե-  
բաղդարար, ապա թէ ոչ կեանքը բիշ մը աւելի ձանձրալի  
պիտի ըլլար։ Մարդուս մտքին մէկ կողմը միշտ տղայ կը  
մնայ, առ կողմը պատկերէն կ'ախորժի. ան ինչ որ ներ-  
կայացնէ՝ քննադատութեան վեր է։ Անոր համար է որ ա-  
ռակն ու առածը ժողովուրդներու էն իմաստուն առաջնորդ-  
ները համարուած են։ Քեզի անշուշտ յիշեցնելու հարկ  
չի կայ թէ «տղայամիտ ժողովուրդներու»։ Ուրեմն մենք  
Հայերս ալ այդ իմաստութեան կրնանք օշտուիլ։

Երեք զաւիթ սէր ծերունի մը երբ մահուան գալը կը  
զգայ անկողինն բով կը կանչէ տղաքները վերջին օրհ-  
նները անոնց տալու համար։

Նախ մեծին.  
— Աստուած մէկ օրդ հազար ընէ, զաւակս, կ'ըսէ.  
Հոգ բանես ոսկի գանայ. օր մը օրանց երեսեկ փասս մը  
չի տեսայ. սուտ մը չի խօսեցար. ինչ որ կ'ըսէիր շիտակ  
էր. խօսքիդ կը հաւտայի. գործերս ալ անոր համեմատ  
կը բռնէի։

Յետոյ պատիկին.  
— Աստուած բուկին ալ մէկ օրդ հազար ընէ, զաւակս.  
Կուն ալ Հոգ բանես սսկի գանայ. բուկին երեսեկ ալ փասս  
մը չի տեսայ. օր մը շիտակ չի խօսեցար. ինչ որ կ'ըսէիր  
սուտ էր. գիտէի, անոր համեմատ գործս կը բռնէի։

Ետքն ալ միջակը.  
— Այ տղայ, քեզի ինչ ըսեմ, շիտակ ալ կը խօսէիր,  
սուտ ալ. ինչ ընելս չիյտէի. ըսածիդ չէի հաւտար՝ շիտակ  
կ'ելլար, կը հաւտայի՝ սուտ կ'ելլար. Աստուած...

Մարդը խօսքը շաւարտած հոգին կ'աւանդէ, սուտի  
չենք գիտեր թէ իր փորձառութեան վճիռը ինչ պիտի ըլ-  
լար։

Մենք ալ, բարեկամս, ունեցանք խզմիրեանը. զի-  
տէինք թէ ինչ որ ըսէր շիտակ էր։ Առ մարդէն օր մը չի  
խաբուեցանք. «Աստուած մէկ օրը հազար ընէ»։ Մաքն ա  
Բարձրորդմէսը ունեցանք իբր տեղապահ։ Իր շար բեղ-  
ղէն պատրիարք շեղաւ, բայց տեղապահութեանը օր մը  
չխաբուեցանք, ու պատրիարք ալ ըլլար պիտի չի խաբ-  
ուէինք. ինչ ըսէր, սուտ էր. գիտէինք։ «Աստուած ա-  
սոր ալ...» քեզի կը թողում սրտեզ բղխածը բաւցնելու  
Բայց օր թ ա ճ ւ ն. առ Օրմանեանը. Թան մը կ'ը-  
սէ կը բարկանանք. «սուտ կը խօսի, ազգը խաբելու ե-  
լեր է» կը պոռանք կը կանչենք. մէյ մըն ալ «բաւից  
դուրս է գալիս» դր մարդը շիտակներուն էն շեղակն է ը-  
սեր. լեզունիս կը բաշենք տեղերնիս կը նստիմք։ Ալ անկէ  
ետքը իր խօսքը Աւետարանի խօսք է. ըսածին չհաւտալ  
մեղք է. մէյ մըն ալ օրին մէկը կը հասկնանք թէ սուտ է  
խօսեր. մեծ պրպարացումը յայտնի է, «քաղաքականու-  
թիւնը առանկ կը պահպնէ»։ Հիմա դուն ըսէ, «որոշա-  
պէս» ինչ ըսենք. խեղճ Բնագրը անգամ ինչպէս օգ-  
նութեան հասնի։

Ու եկու տես որ իրականութեան մէջ մեծն ալ, պըզ-

տիկն ալ, ճշմարտասուն ալ, ստասիօն ալ, պաշտօնա-  
վարութեան կարճ կեանք կ'ունենան. ա'ն Միջակին մէկ  
օրն է որ հազար կ'ըլլայ. ու մենք՝ մենք ալ ա'ն ծերու-  
նիկն պէտ պիտի մեռնինք՝ «Աստուած...» շարունակու-  
թիւնը բերաննիս մտալով. զուր տեղը ապագան մեր վճի-  
որ պիտի փնտռէ:

Եւ զիտե՞ն ո՛ւր պէտք է փնտռել առ երկարակեցութեան  
զաղտնիքը: Կլիմային յարմարելու հոգածութեան մէջ,  
Քիւզանդական կլիման բիւզանդական քաղաքականութիւն  
կը պահանջէ: Երկու մարդ առ ճշմարտութիւնը աղէկ բմ-  
բոնքեր են՝ սուլթան Համիտ եւ Օրմանեան պատրիարքը,  
ուստի շատ ապրելու սահմանուած են:

Պիտի հարցնենք — Իսկ ժողովուրդները: Առ հար-  
ցումից պատամխանքը շատոնց է տրուած է, «իմ ետքը  
Ջրհեղեղ»: Բայց անհատները չեն որ Ջրհեղեղի մը ժա-  
մանումին թուականը կը սահմանեն. բնութիւնը ինքն  
իր զործը կը տեսնէ: Ջրհեղեղը Լուի ԱՅրդի վրայէն ան-  
ցաւ, բայց Լուի ԱՅրդին անդրաշուումին չսպասեց:

Ա՛ս ալ մեր յոյսն է:

\* \* \*

Երկրորդ հարցումը Սահմանադրութեան կը վերաբերի:  
Կ'ուզես զիտնալ թէ « ո՛ւր է վերաքննութեան ինչդերը, ե՛րբ  
կրնայ վերջանալ, ի՛նչպէս »:

Աս տարի, բարեկամս, ՉՅրդը լրացնելով ՉՅրդը մը-  
տաւ առ Վերաքննութիւնը. քանի մը յիշատակութեամբ  
միաբալ ձգեմ՝ ա՛ն քանի մը մանր մանր զեպքերը որոնք  
աս աշխարհիս մէջ անցան զարձան Վերաքննութեան  
օկոգրատութեանն է վեր:

Երկու կայսրութիւն կործանեցան՝ ֆրանսականը եւ  
պրագիլիականը. անոնց տեղ հանրապետութիւններ կանգ-  
նեցան:

Սլաւոնիա երկու տեսակ թագաւորութիւն եւ մէկ ալ  
հանրապետութիւն ունեցաւ:

Պապին բազմադարեան աշխարհական իշխանութիւնը  
ընջուեցաւ:

Իտալիոյ միութիւնը սմբողջացաւ. Հոռոմով:

Գերման կայսրութիւնը ստեղծուեցաւ:

Պատերազմեցան՝ Գերմանիա եւ Ֆրանսա, Թիւրքիա  
և Գարսաղ—Սերպիա—Ռումանիա, Ռուսիա և Թիւրքիա,  
Պուլկարիա եւ Սերպիա, Եթովպիա եւ Իտալիա, Չին եւ  
Ճարոն, Թիւրքիա եւ Յունաստան, Ամերիկա և Սլաւոնիա.  
չեմ հաշուեր Չուլուկնուրը, Աշանդին, Մատակասքարը,  
Թոնքինը, Սուտանը, Ամերիկեան պզտիկ հանրապետու-  
թիւններու կոիւնքը, Եւայն, Էւայն, Էւայն:

Ռուսիա երեք կայսր փոխեց՝ Ալեքսանդր Բ. Ալեքսանդր  
Գ. Նիքոլա. Բ.: Գերմանիա նմանապէս՝ Վիլհելմ Ա.  
Ֆրեդերիք Գ., Վիլհելմ Բ.: Թիւրքիա երեք սուլթան՝ Ա-  
ղիզ, Մուրատ, Համիտ: Ֆրանսա վեց նախագահ՝ Թիէրի,  
Մոքսազոն, Կրէլի, Գառնո, Բազիմիւր—Բէրիէ, Ֆելիքս  
Ծոն: Միացեալ Նահանգները եօթը—ութ նախագահ:

Հայերը երեք կաթողիկոս ունեցան՝ Գևորգ, Մակար,  
Մկրտիչ: Վեց պատրիարք՝ Խրիմեան, Եկրսէս, Յարու-  
թիւն, Խորէն, Մատթէոս, Մաղաքիա:

Անգլիոյ թագուհին կրկնապատկեց իր Թագաւորու-  
թեան տեսչութիւնը:

Քրիստոսաւոր Գաղարսեան մեռաւ:

Րումանիա, Սերպիա բոլորովին անկախ հռչակուե-  
ցան: Պուլկարիա ազատագրեցաւ: Եղիպտոս Անգլիոյ ան-  
ցաւ Ամերիկէի հետ:

Մէկ «հիւանդ մարդը» երկուք եղաւ՝ Չինաստանի  
յուելումով:

Գանուեցան՝ կրկնորական լոյսը և երկաթուղին, հե-  
ռաձայնը, միքրոսքը, կատաղութեան գարմանը, Բ. ճառա-  
գայթը և . . . . .

Սուլթան Համիտ երեւան եկաւ:

Ջարդուեցան՝ 100,000 Հայ, ցիրուցան եղան՝ 100  
հազար Հայ. կորսնցուցին Հայերը քանի մը միլիոն ռուսի:  
Եւ ոտկայն Սահմանադրութեան վերաքննութեան ա-  
ռաջին գլուխը դեռ չաւարտեցաւ:

Ռուսից այս զիմացկունութիւնը: — Պատասխանը  
թերեւտ հին հեղինութեան մը մէջ գտնենք: «Հայոց Սահ-  
մանադրութիւնը քառակուսի անիւներու վրայ է դրուած.  
չի քալեր» բռտծ էր Ալի փաշան: Հաւանօրէն կը սխալը:  
Արեւելքի մէջ ո՛ր և է ձեռնարկի յարատեւութիւնը հեռե-  
ւարար եւ արդիւնաւորութիւնը ապահովելու համար պէտք  
է անիկա քառակուսի անիւներու վրայ ընթացող կառքի  
մը մէջ դնել: Մեր երկիրը ինչ որ արագ կը սահէ, կը զու-  
տորի, օրինակ՝ օսմանեան սահմանադրութիւնը՝ որոն  
կառքին անիւները շատ կըր ու ուղորկ, արագ արագ կը  
փաղկը, եւ ահա զլտորեցաւ, աներեւութացաւ:

Օգտուիմ այս առիթէն կարծիք մըն ալ յայտնելու:  
Մեր Յեղափոխութիւնը եթէ քառակուսի անիւներով կառ-  
քի մը վրայ հանդչած ըլլար հաւանօրէն եթէ ոչ աւելի ա-  
րագ, բայց զոնէ աւելի ապահով կը յառաջանար: Կար-  
ծիք մըն է կը յայտնեմ, մտածէ՛. թերեւտ արտաոտց կար-  
ծիք մը երեւի, «բարատոքս» մը ինչպէս կ'ըսեն. բայց  
«բարատոքսը» չէ՛ սահմանուած՝ «վաղուան ճշմարտու-  
թիւնը»:

Ատոր վրայ, Պատ բարով, կամ՝ եթէ կ'ուզես՝ ցոտե-  
սութիւն:

ՍԿԵՊՏԻԿ

ԼՈՒՐԵՐ

Պիգմալք իշխանին մահը արձանադրելով կ'անց-  
նինք: Հայկական Զարդերուն ատեն շնականօրէն ըսաւ որ  
«ատիկա այնչափ հոգը կ'ընէ որչափ իր պարտէզին ա-  
ծուները արշալոզ խլուրդին ոչնչացումը:» Բայց, ալ ա-  
ւելի, ինքն է հիմնադիրը եւրոպական սյուսբուան քաղա-

բականութեան որ սկարին՝ ո եւ է իրաւունք չի ճանչնար:

— «Ռըվիւ տէ Տէօ-Մոնտ» վերջապէս կը հաճի ըզբաղիլ հայկական ինքրով: Օգոստոս 1 ի թիւին մէջ Պ. Պէնէտէզի, ութնունամեայ հին դիւանապետը, ընդարձակ յօդուած մը ունի շատ համակիր մեր պատին ու ցեղին: Թիւրքերուն համար արդար ու անողոր է, այդ «հպարտութեամբ ու մոլեռանգութեամբ խմորուած» մարդոց համար որոնց «տարածուելու ուժը չորցած է» եւ որոնք «իւրենց շինած աւերակներուն վրայ կ'ապրին»: Զարդերուն վրայ երկարօրէն խօսելէ յետոյ, Պ. Պէնէտէզի կը բննէ Եւրոպայի ընթացքը «այդ տագնապին հանդէպ, որ, այնչափ եղբրական սկզբնաւորութենէ մը յետոյ, գերեզմանին լուսութեան մէջ մարեցաւ», ու կը դատապարտէ եւրոպական պետութիւնները որ, իրարմէ միշտ կ'անկաճուտ, իրար չէզոքացուցին, բնաւ անշահահինդրութեամբ չզիտելով հասարակաց շահը:

— Սուլթանը ամէն վայելքները ճաշակելու վրայ է. մարդասպանը հիմա անբաղկատելի հեգնող մը եղած է. կալէսի իշխանին իյնալուն և ծունգը կտարելուն առթիւ, սուլթանը հեռադրեց Լոնտոն՝ իշխանին որպիսութիւնը հարցնելու, եւ առաջարկեց իր վիրաբայժը՝ Ճէմալ փաշան՝ դրկել, իշխանը դարձանելու, ճիշդ ինչպէս իր սիրական հրու հպատակներուն կ'ընէ, Մէքթուպճի Հասան պէյին կամ Մէօհիւրտար Հիւսէին էֆէնտիին հիւանդ եղած առտնը: Սուլթանը, ինչպէս կը տեսնուի, ոչ մէկ հաճոյքէ զրկել կ'ուզէ կոր ինքզինքը:

— Մանչէսթըրէն կը գրեն մեզ թէ երգչուհի օրիորդ Բարպեան և Բարիդի Երաժշտանոցին աշակերտ Պ. Եշիազարեան Աթէնէումի սրահին մէջ նուազահանդէս մը տուեր են: Երկու արուեստագէտներն ալ, մանաւանդ օրիորդը, մեծ յաջողութիւն ունեցեր են:

— Կարգալ, «Թուո տիւ Մոնտ» ի 13, 14 եւ 15րդ թիւերուն մէջ, հայասեր տիկին Շանդրի շատ շահեկան ուղեւորութիւնը կ'իլիկիոյ մէջ, բազմաթիւ պատկերներով: Տիկին Շանդր, որ արդէն հասարակ մը հրատարակած է իր տալուորութիւնները՝ ամուսնոյն հետ կ'ովկաս կատարած ճամբորդութեանը մասին, հիացումով կը խօսի կ'իլիկիոյ բնական գեղեցկութեանը վրայ և կ'ողբայ արդի վիճակը այդ երկրին ուր փայլուն քաղաքակրթութիւն մը ծաղկած է, որուն աւերակները միայն կը մնան այսօր:

— «95 ի գէպերէն ի վեր եօթն երոբր անգամը ըլլալով, կը գրեն մեզ Տիբապէրէրէն, Քիւրտերը Սաթուզիլէն 1,500 դրշ. ի քրժողութեամբ բանի մը եզ քշեցին տարին»: Խեղճ արի զիւղացիներ, որոնք վաղը նորէն պիտի դառնին՝ կորուստին տեղը լեցնելու:

— «Զափազանցութիւն չէ ըսել թէ Ամերիկացի կիներու ամբողջ նոր սերունդը զպրոց կ'երթայ»: Այսպէս կ'ըսէ Միս Մէսըն Centur ի մէջ: Մասնաճիւղ կ'ընէ թէ արդի մտաւորական շարժումը՝ քաղաքներու մէջ սահմանափակուած չէ միայն. «Ամէնէն հեռաւոր զիւղը դացէք, կ'ըսէ, ու պիտի գտնէք անխուսափելի ակումբը, ուր կիներ կը խօսին կը վիճին վերջին վէպին, քաղաքական կացութեան, արժաթի խնդրին, հայկական Զարդերուն մասին»:

— Անգլիա եւ Ֆրանսա այս միջոցիս մեծ ծառայութիւն մը մատուցանելու վրայ են Թիւրքիոյ: Բանակցութիւններ սկսած են՝ զեղչելու համար տուկոսները 1855ի հինգ միլիոն սկիի փոխառութեան զոր Անգլիա եւ Ֆրանսա երաշխաւորած են: Այդ փոխառութիւնը՝ հարիւրին չորսով էր, եւ 250,750 սկի պէտք էին՝ տուկոսին եւ զլիսավճարին համար: Փոխառութիւնը 2 1 2 րոպ հարիւրի զեղչուելով, օսմանեան գանձը 600,000 սկի պիտի վաստկի:

Արդ, կ'ըսէ «Տէյի Նիւզ», Թիւրքիոյ այս ծառայութիւնը մատուցանելու ասան՝ պէտք է առիթն օգտուիլ եւ համապատասխան ծառայութիւն մը մատուցանել Հայաստանի բիրաւոր զժբազդ բնատանիքներուն: Թիւրքիա լաւ գործ մը պիտի կատարէ՝ իր շահած այդ գումարէն բաժին մը հանելով ի նպաստ Հայերուն: Թիւրքիա այդ գումարը չի կրնար ստանալ առանց Անգլիոյ եւ Ֆրանսայի հաւանութեանը, և որովհետեւ երկու պետութեանց դիտողութիւնները, պատուէրները, բողոքները եւ թախանձանքները բոլորովին ապարդիւն մնացին, առիթը շատ յարմար է պայմաններ դնելու:

Իցիւ թէ, ի նպաստ Հայաստանի զժբազդներուն, Անգլիա եւ Ֆրանսա հետեւէին անգլիական մեծ թերթին այս հանձարեղ թելադրութեան:

«ՎԱՂՈՒՄԸ ՅԱՅՆԸ»

2. Նոր պաշտօնակից մը.

Մանչէսթըրէն կը գրեն մեզ թէ յառաջիկայ սեպտեմբեր 1էն սկսեալ ամսաթերթ մը պիտի հրատարակուի հան «Վաղուան ձայնը» խոստեալից անունով: Նոր ամսաթերթը փոքարը պիտի ըլլայ երիտասարդ նոր դրողներու խումբի մը որոնք, խանդով ու կրակով լեցուն, հայրենի հողէն անջատուած՝ օտար հողին վրայ կ'ուզեն հայ դրականութեան փթթիւնազարդութիւն մը սկսիլ: Թիւրթը գուտարական պիտի ըլլայ, բայց ազգային խնդիրներու ալ մը տահալութիւնը պիտի ունենայ միշտ:

Ամէն յաջողութիւն կը մաղթենք մեր նոր պաշտօնակիցին:

ՀԱՍՏԻ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ եւ բախնչին զրկել առ

L. FRANK,  
309, LADBROKE GROVE,  
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 սոլար: